



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Зуарб Әбдеселі Әр
Чөлшілдердең көндөр

баш Ә. Р. ғ.

1877.

Уәртә

429, 533, 536



ԱՅՐԵ
533

ՆԵՐՍԻՍ Վ ԱՇՏԱՐԱԿՑԻՆ

Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

Բ.

Հայոցին Թագավոր 1877 թվականի մայիսի 18-ի օրը հայտնաբերվել է առաջին աշխարհական պատճենը՝

Ճողովնեաց

Ա Դ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ե Ր Ի 8 Ե Ա Ն Ց



ՏԻՓԼԻС

Տիպոգրիա Ամբարցւա Էնֆածյանց և Կ-օ.

1877

ՀԱՅՐԱՎԱՅՐ Վ ԱԳՈՒ

Հ Ա Յ Ա Մ Ֆ Զ Ժ Թ Ա Գ Գ Բ Դ

Дозволено Цензурою. Тифлисъ. 19-го июня 1877 года.

Խ Կ Ձ Դ

(1431)
41)



Հ Ա Յ Ա Մ Ֆ Զ Ժ Թ Ա Գ Գ Բ
533-2009

ՆԵՐՍԻՍ ԱՇՏԱՐԱԿՑԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԺԱՄԱՆԱԿ

Ա.

ՆԵՐՍԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Տասնեւութերրորդ գարու վերջն էր, ձմեռային ժամանակ։ Էջմիածնի միաբանութիւնից այս կողմ և այն կողմ նամակներ էին ուղարկվում զուկաս կաթողիկոսի մերձի մահ հիւանդութիւնը հազորդելով։ Արդէն նոր հայրապետի ընտրութեան մասին մտածող ներ կային և միաբանութիւնը կուսակցութիւնների էր բաժանուած։ Գաւիթ Ղորղանեան լնագեթցի արքեպիսկոպոսը, որ Աթոռակալի պաշտօն էր վարում, յայտնի գիտաւորութիւն ունէր կաթողիկոսանալու, թէև գիտէր որ եթէ այդպիսի ցանկութեան տէր լինի և Ռուսաստանի առաջնորդ Յովսէփ Արղութեան արքեպիսկոպոսը, վերջնա յաղթող պիտի գտնուի։ Յովսէփ արհւոյ գիտաւորութիւնը իմանալու մտքով, Դաւիթը արդէն 1799 թուի նոյեմբերի 27-ին զիմեց նորան նամակով, որի միջ զուկաս կաթողիկոսի անյօւսալի գրութիւնը նկարագրելով, հրաւիրումէ Յովսէփին հայրապետական գահը ժառանգելու։ Այս կեղծաւոր գրութիւնը Յովսէփին ընդունեց իբրև Էջմիածնի միաբանութեան անկեղծ ցանկութիւն ու կաթողիկոսանալու պատրաստութիւն էր տեսնում։ Դաւիթի համախոհ միաբաններն էին՝ Սաեփան Բոկոտն անուանեալ Թիֆլիսեցի եպիսկոպոսը, ոմն Ղազար վարդապետ և այլք։ Բայց Էջմիածնեցոց մէջ կային այն ժամանակ և քանի մի պատկառելի ու նշանաւոր եպիսկոպոսներ, ինչպէս Մինաս ծերունին, Յովհաննէս Գեղարդակիրը, Գրիգորը, Թադէոսը, Բարսեղը և Աստուածատուրը, որոնք ընդդէմ էին Յովսէփի կաթողիկոսանալուն, իսկ Դաւիթի գաղատնի գիտաւորութիւնները ըսդիտէին անգամ։ Զուկասի հիւանդութիւնը օրէցօր սաստկանումէր, և հիւանդ հայրապետի սիրաը խոցվումէր տեսնելով որ գեռ իւր կենդանի եղած ժամանակ Արղութեանց Յովսէփը

յամառութեամբ կաթողիկոսանալու պատրաստութիւններ է տեսանում: Վիրաւորուած Ղուկասը իւր հոգեվար վրութեան մէջ անդադար բացականչում էր. «ինձ ի՞նչ մնաց այս ունայն աշխարհից, որ քեզ ինչ մնայ, Յովսէփի վարդապետա: Դեկտեմբերի 27ին 1799 թուի հանգեաւ ի Տէր Ղուկաս կաթողիկոսը մօտ 19^{1/2}, տարի հայրապետական գահը վարելուց յետոյ:

Դեռ մինչև նորա վախճանիլը այն Եջմիածնեցիքը, որոնք Դաւթի հակառակ կուսակցութիւնն էին կազմում, կաթողիկոսական ընտրելի էին ընդունել Բայազէթցի Առաջիւ արքեպիսկոպոսին, որ այդ միշոյում կ. Պօլսի պատրիարք էր, և Եփրեմ արքեպիսկոպոսին, որ այդ ժամանակները. գնացել էր Ռուսաստան նուիրակութեան և որին Յովսէփի առաջնորդը Աժտարիսանի մէջ պատուաւոր բանտարկութեան մէջ էր պահում: Բայցի դոցա՝ կաթողիկոսութեան արժանի էին համարվում Նոր-Զուղայի առաջնորդ Գալուստը և Կեսարիայի առաջնորդ՝ Ստեփան Եպիսկոպոսը:

Երկար¹⁾ կը լինէր պատմել, թէ ինչպէս Եջմիածնեցիք Ղուկասի թաղմանից յետոյ սկսեցին կաթողիկոսի ընտրութիւնը և թէ Դաւիթը, իւր կուսակիցներով, ինչ և ինչ խարդախութիւններ գործ դրեց այս բանի մէջ: Վերջապէս 1800 թուի յունվարի սկըզբներում միաբանութիւնը ընտրեց կաթողիկոսացու երկու անձն, նախ Դանիէլն և երկրորդ Եփրեմին: Դաւիթը, այստեղ անյաջող գրտնուելով, հետամուտ եղաւ որ ինքը ուղարկուի Պօլս Դանիէլն հրաւիրելու, միաբանութիւնը ակամայ զիջաւ այդ ցանկութեանը և Դաւիթը յունվարի 16ին 1800 թուի Դարսի վրայով ճանապարհ ընկաւ դէպի Պօլս: Գիւմիւշանցի Մանուէլ վարդապետ Ալթունեանը, որ թողել է այս եղելութիւնների մանրամասն նկարագրութիւնը, պատմումէ, որ Դաւթի ճանապարհ ընկնելուց յետոյ՝ Քթադւ դէսու Եպիսկոպոսը և Ներսէս Վարդապետը կաթողիկոս կոպոսն զգացուցին Դանիէլ պատրիարքին զեւելութիւնն մանրամասն և նաբար ի զգուշութիւն նմաս: Այստեղ առաջին անգամն է հանդէս դուրս գալիս Ներսէս Աշտարակցի վարդապետը:

Յայտնի է որ 1799 թուի Վերջերին Ներսէսը գտնվում էր Դաւ-

նիէլ պատրիարքի մօտ Պօլսում, ուր վերադարձել էր երեք տարի շարունակ Մոլդաւիայի և Վալաքիայի կողմերը նուիրակութիւն անեւ լուց յետոյ: Կաթողիկոսական ընտրութեան ժամանակ Ներսէսի Եջմիածնում գտնուելիլց ցոյց է տալիս, որ դա Եկած է այստեղ Ղուկասի մահուանից գուցէ միայն մի քանի օր առաջ: Զմեռ ժամանակ Պօլսից մինչև Եջմիածին ճանապարհորդութեան նպատակը, պէտք է կարծել, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ աշխատել յօգուտ Դամիէլի ընտրութեան, որ և յաջողեցաւ: Քաջ ծանօթ լինելով Դաւթի դիտաւորութիւններին՝ Ներսէսը, ինչպէս տեսանք, շտապումէ զգուշացնել Դանիէլին՝ և այս գործում է այնպէս խոհեմ, որ նորա նամակը Պօլս ստացվումէ Դաւթի ժամանելուց մէկ օր առաջ:

Հազեւ թէ Դաւիթ եպիսկոպոսը ճանապարհ է լնկնում դէպի Պօլս, գալիս են Եջմիածին Վրաց Գէորգի XII վերջի թագաւորի և վրաստանցի Հայոց ուղարկած մարդիկը, որոնք խնդրում և պահանջում են, որ Յովսէփի Արդութեան եպիսկոպոսը ընտրուի կաթողիկոս: Միաբանութիւնը ակամայ զեջանումէ այդ առաջարկութեանը և նորից ընտրութիւն անում, դարձեալ առաջին ընտրելի նշանակելով Դանիէլին, իսկ երկրորդը Յովսէփին, փոխանակ Եփրեմի: Վրացոց պահանջման այդպիսի յաջող ելքի պատճառն այն էր, որ այդ ժամանակները Սուրբ Գեղարդը, որ Եջմիածնի գլխաւոր սրբութիւնն ու գանձն է համարվում, գերի էր Թիֆլիսի մէջ և Գէորգի թագաւորը սպառնում էր չվերադարձնել մինչև որ Յովսէփին կաթողիկոս ընտրեն²⁾:

2) Գիւմիւշանցի Մանուէլ Ալթունեան վարդապետը իւր այլ զըրուածքների կարգում թողել է մեկ Ս. Գեղարդի գերի մնալու պատմութիւնը, որից երեսում է որ 1797 թուին Թիֆլիսի կողմերը ժանտախտը սաստիկ ջարդ էր տալիս: Վրաց Գէորգի վերջին թագաւորն, երեսի հայոց թելադրութեամբ, քանի մի անդամ դարձաւ խնդրանօք Ղուկաս կաթողիկոսին, որ Ս. Գեղարդը բերեն Թիֆլիսը ցաւից ֆարատելու, բայց հայրապետը ամէն անգամ բացասական պատասխան էր տալիս: Այն ժամանակ թագաւորը դիմեց Երևանի խանի միջնորդութեանը և Ղուկասը զիջանելով իրնդրին՝ Ակնցի Յովհաննէս Եպիսկոպոսի (Գեղարդպակիր) ձեռքով ուղարկեց Ս. Գեղարդը Թիֆլիս: Ժանտախտը արդէն վերջացաւ, բայց վրաց թագաւորը դեռ ևս թոյլ չեր տալիս որբութիւնը Եջմիածնի վերադարձնելու: Ասում են որ այս բանը սաստիկ ազդեց Ղուկասի հիւանդութեան վրայ: Յովհաննէս Գեղարդպակիրը Թիֆլիսի մէջ Ս. Գեղարդի պահապան էր գտնվում, երբ որ Յովսէփի Արդութեանի խնդիրը ծագեցաւ:

¹⁾ Այս մասին մանրամասն տեղեկութիւններ ուզողը կարող է զիմել «Կոռնկ» Հայոց աշխարհիւ ամսագրին (1863 թուի) և «Կավկազի Տարիք» ամսագրին եր՝ «60—64, 90—105, 144—151, 167—191.

Յովհաննէս գեղարդակիր եպիսկոպոսը, որ այդ ժամանակը թիֆլս էր գտնվում իրեւ Ա. Գեղարդի պահապան, քաջ զիտէր թէ որ աստիճանի անհաճելի էր Եջմիածնեցոց համար Յովհանի ընտրութիւնը: Մի և նոյն ժամանակ՝ երկիւղ կրելով, որ մի գուցէ Յովհանի արհին վրացոց ձեռքով բոլորովին խէ Ա. Գեղարդը Եջմիածնից, սաստիկ ցանկանումէր որ և իցէ հնարքով փախցնէլ այդ սրբութիւնը Թիֆլսից, որ և վերջ ի վերջոյ յաջողեցաւ նորան: Երբ Գեղարդակիրը Եջմիածնին հասաւ տեղացի միաբանութիւնը մեծ հանդէսով և ուրախութիւնով դիմաւորեց նորան: Այս հանդիսի մէջ, ինչպէս ասումէ Մանուէլ Ալթունեանը՝ «Ներսէս վարդապէտն»՝ սպասուր Դանիէլ պատրիարքի, որ յայնժամ յղեալն էր ի պատիւ կաթողիկոսութեան նորա, զգեցոյց Յովհաննու զվեւ ըրարկու ղանդարի և զիիլոն պատուական»: Իէլ ոչինչ զրաւոր տեղեկութիւն չունինք, թէ երբ եղաւ այս անցքը, բայց կաթողիկոսական ընտրութիւնների ընթացքից երեւմէ, որ պէտք է պատահած լինի 1800 թուականի մարտ կամ ապրիլ ամսին:

Ինչպէս վերեւ ասացինք, Դաւիթ Դորդանեան եպիսկոպոսը հասաւ Պօլիս, և կաթողիկոսական ընտրութիւնը սկսուեցաւ Օսմաննեան մայրաքաղաքում ու մեծամեծ շփոթութիւնների առիթ դարձաւ: Դանիէլը քանի մի անգամ հրաժարական տալուց յետոյ ընդունուեցաւ կաթողիկոս, իսկ խորամանկ Դաւիթը ընտրուեցաւ Պօլսոյ պատրիարք: Քանի մի օրից յետոյ Դաւիթի տեղ պատրիարք Կանակուեցաւ Յովհաննէս Պալատացի (Պօլսոյ—Պալատ թաղի քառողի) եպիսկոպոսը, իսկ Դանիէլը ռուսաց գեսպան թամարայի ազգեցութեամբ, որ յօգուտ Յովհանի էր, աքսորուեցաւ նախ թեննեդոս կոզին, յետոյ թոխաթ (Եւդոկիայ): Այլպէս ահա Դանիէլի ընտրութիւնը արգելուեցաւ և առաջացաւ Յովհանի Արղութեանի ընտրութիւնը: Պատրիարքութիւնից ընկնելով՝ Դաւիթը նորից շտապեց Եջմիածնի դարձեալ կաթողիկոսանութ յուսով: Ներսէս վարդապէտը այդ բոլոր ժամանակ գտնվումէր Եջմիածնին և միւս միաբաների հետ լսում Յովհանի յառաջադիմութեան անհաճոյ լուրերը:

Դուկաս կաթողիկոսի մահուանից քանի մի ամիս անցած, Երեանի կողմերը ձայն տարածուեցաւ, թէ! պարսից Ֆաթ-Ալի շահը, Ատրապատականի տիրապետող Խաներին անհնաղանդ համարելով, ուղարկումէ նոցա վրայ մի մեծ բանակ Դրահիմ-Խան սարդարի հրամանատարութեամբ: Եջմիածնեցիք սարսափի մէջ ընկան,

Հաւաստի լինելով, որ պարսից զօրքը ըստ սովորականին վանքն ևս պիտի թալանէ. վասնորոյ միաբանութիւնը վճռեց, որ վանքի բոլոր թանկագին կայքը, քանի մի արկղներով, յանձնուի Ներսէս վարդապետին, որպէս զի սա տանէ և պահէ Բայազէթ քաղաքում, ուր արդէն գտնվումէր և առաջուց ուղարկած կայքի մի մասը³⁾: Նոյն 1800 թուի յուլիս և օգոստոս ամիսներին Ներսէս վարդապէտն իւր բարեկամ և օգնական Ռէթէսու⁴⁾ վարդապէտի հետ Բայազէթ է գտնվում և այնտեղից գրագրութիւն անում Եջմիածնեցոց հետ: Մեր ձեռքին մի նամակ կայ Եջմիածնից գրած 1800 թուի օգոստոսի 14ից, որ սկսվումէ այսպէս՝ «Ի լուսանկար Սուրբ Գահին Եջմիածնի՝ վշտակիր պաշտօնէից գործակալ եպիսկոպոսաց՝ հոգեոր և որդւոյ սիրելի եղօր մերոյ Ներսէս շնորհափայլ վարդապէտի ողջ ջոյն և սէր յոյժ կարօտիւ հանդերձ օրհնութեամբ, ի Պայազիտ: Եամսոյս օգոստոսի 10 գրեալ նոր թուղթ քոյ, հանդերձ հին թղթովի և այլ թղթովին հասին առ մեզ. և այլն: Այս նամակի մէջ Եջմիածնեցիք նկարագրումեն թէ ինչպէս պարսից զօրավար Խրահիմ-Խան սարդարն եկաւ Եջմիածնի մօտ, թէ որքան նեղութիւնն իր հասցրեց միաբաններին և այլն և այլն: Նամակի վերջում, Ռէթէսու վարդապէտին ևս ողջոյն ուղարկելով, ստորագրումեն՝ Մինաս եպիսկոպոս, Սիմէօն եպիսկոպոս աթոռակալ, Բարսեղ, Թագէսու և Յովհաննէս եպիսկոպոսք:

Սորանից յետոյ և մինչև 1801 թուականի սկզբները Ներսէսը,

³⁾ Երբ ներքինի Աղայ-Մամադ-Խանի ղէպի Ատրապատական արշաւելու լուրը տարածուեցաւ (1795 թուին), Ղուկաս կաթողիկոսը աթոռային թանկագին և հազուազիւտ կայքերը արկղների մէջ դարսելով, 22 արկղ ճանապարհոց Եջմիածնից քաղաքիս առաջնորդ Պետրոս եպիսկոպոսի անունով, իսկ 21 արկղը ուղարկեց Բայազէթ: Երբ 1795 թուին սեպտեմբերի 11ին Աղայ-Մամադ-Խանը աւերեց Թիֆլիսը, նորա զօրքին զոհ եղան ոչ միայն քաղաքի բոլոր հարստութիւնները, այլ և յիշեալ 22 արկղները, որոնց միջի ականակապ թագերը, խաչերը, գաւազանները, ոսկեայ սկիհները և այլն կարծէին, ինչպէս ասում են, մօտ 200 հազար պարսից թուման: Բայազէթի պահուատը, օսմաննեան երկրի մէջ լինելով, ազատուեցաւ:

⁴⁾ Ինչպէս յայտնէ, Ներսէսի քոյր Գայիանէս ամուսնացած էր ոմն վարդապէտացի Յովհաննէսի հետ: Այդ Յովհաննէսի եղբայրն էր Ռէթէսու վարդապէտը, որ յետոյ եպիսկոպոսութեան հասաւ: Սա բոլոր ժամանակ Ներսէսի կուսակիցն էր և օգնականը:

մեր ձեռքում գտնուած զրութեանց մէջ, այլ ևս հանդէս չէ դուրս գալիս և այդ պատճառով չգիտենք թէ որքան ժամանակ մնաց նա Բայազէթ կամ երբ վերադարձաւ Եջմիածին:

Բ.

ՆԵՐՍԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀՐԱՄԻՐԱԿ

Յովսէփ Արշութեան արքեպիսկոպոսը, ամէն արքելքների յաղթելով, ուռւաց կայսրութեան զօրութեամբ Եջմիածնի կաթողիկոսութիւնը ստացաւ և իւր սիրելի կարապետ վարդապետին օր մի առաջ Եջմիածին ուղարկելով իր իւր փոխանորդ, մեծ փառքով ու շքով 1800 թուի գեկտեմբերի 12-ին Պետերուրդից եկաւ, հասաւ Աժտարիսան: Վանքը և աթոռը կառավարող ծերունի Մինաս եպիսկոպոսը, Յովսէփ կաթողիկոսի ընտրութեանը տհաճելով, ցաւից մեռաւ նոյն տարուայ հոկտեմբերին: Դաւիթը խոհեմարար լոելէր, իսկ Դանիէլին ցանկացողները սարսափումէին Յովսէփի մօտենալու լուրերից: Յովսէփը 1801 թուի փետրուարի 11-ին ժամանեց Թիֆլիս, հետո ունենալով իւր սիրելի Գրիգոր վարդապետին և հանդիսաւոր մնութք զործելուց յետոյ, ներկայ եղաւ վրաց Գէորգի վերջին թագաւորի թաղմանը: Այս միջոցում Եջմիածնի միաբանութեան կողմից հրաւիրակ եկան Թիֆլիս Սիմէօն, Անդրէս, Բարսեղ և Թադէս եպիսկոպոսները և սառը ընդունելութիւն գտան Յովսէփ արհուց: Մինչեւ պատրաստութիւն էր տեսնվում դէպի Աթոռը ուղևորուելու, Յովսէփ կաթողիկոսը հիւանդացաւ և քանի մի օրից յետոյ, այնէ մարտի 9-ին (1801 թ.) վախճանեցաւ ազգականներով ու բարեկամներով շրջապատած: Գրաւոր, իւր ստորագրութեամբ, կտակ չըթողեց Յովսէփը, բայց բերանացի յանձնեց Սիմէօն եպիսկոպոսին, որ իւր հետ եղած եկեղեցական կայքը ուղարկուի Աթոռը և իւր մարմինը թաղուի Եջմիածնի մէջ Սիմէօն կաթողիկոսի գերեզմանի մօտ: Հազեւ աւանդեց հոգին Յովսէփը, որ ահա նորա Գրիգոր վարդապետի և Եջմիածնից եկած եպիսկոպոսների մէջ այն ատելի վէճը ծագեցաւ, որ յետոյ մեր պատմութեան մէջ յայտնի է—Դաւիթի և Դանիէլի կոիւ անունով: Յիշեալ Գրիգոր Աղքերմանցի վարդապետը յայտնեց ուռւաց իշխանութեանը, որ իրեւ թէ հանդուցեալ Յովսէփը իրան, Գրիգորին, բերանացի պատուիրած է, որ Եջմիածնի կաթողիկոս ընտրուի կամ Կ. Պօլսի

պատրիարք Յովհաննէսը կամ Դորդանեանց Դաւիթը եպիսկոպոսը, իսկ ինքը Գրիգորը լիակատար իրաւունք ունենայ Եջմիածին ուղարկելիք կայքը կարգադրելու ըստ հաճոյից, ասպա գնայ Աթոռը եպիսկոպոս օծուելու և այնուհետեւ վերադառնայ Ռուսիա առաջնորդ: Յովսէփի արհու բարեկամները Գրիգորի այս մտքերին համամիտ էին և նորա կուսակից. իսկ Եջմիածնեցի հրաւիրակ եպիսկոպոսները, Յովսէփի մահը Աստուծոյ արդար դատաստան համարելով, իսկոյն հաղորդեցին միաբանութեանը խորհուրդ տալով առաջացնել դարձեալ Դանիէլի ընտրութիւնը: Միւնոյն ժամանակ՝ Աղքերմանցի Գրիգոր վարդապետը դրելով Դաւիթին որ կաթողիկոսանայ ուռւաց տէրութեան ձեռքով՝ արգելեց Եջմիածնեցի հրաւիրակներին Թիֆլիսից դուրս գնալ: Յովսէփի մահուան լուրը Դաւիթը առաջ ստացաւ քան թէ միաբանութիւնը և թէկւ իսկոյն քանի մի բարեկամներ ու կուսակիցներ ժողովեց իւր գործը առաջացնելու մոքով, բայց մարտի 16—20ին Եջմիածնի մէջ գումարուած մեծ և պատկառելի ժողովի մէջ ստիպուած էր դա ընդհանուրի հետ ձայնակցիլ Դաւիթին կրկնին ընտրութեանը և հրաւիրանաց թղթին ևս ստորագրեց: Թիշեալ ժողովն, իւր գրած հրաւիրանաց մէջ մի առ մի պատմելով բոլոր եղելութիւնները, ասումէ Ալրդ ի նորոյ ևս միաբանութեամբ «ժողով արարեալ.... ըստ Աստուածային ազգեցութեան և ըստ առաջնոյ ընտրութեան մերոյ՝ վերստին զբարեգովեալ և զամենաւ պատուական հայրէ» (Դանիէլ) մեր ընտրեցաք լինիլ գահակալ Արքոյ Աթոռոյս և կաթողիկոս և Տէր հոգեոր Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ և բնաւից պաշաննէցիս: Վասնորոյ զայս մահւ սերական թուղթս մեր գրեցաք առ սրբութիւնդ, որով և զիւրելի եղբարսն մեր զՅովհաննէս և զՆերսէս հանձարունակ վարչ դապետմն փեսաւէրս և հրաւիրակս առաքեցաք...: Այնուհետեւ միաբանութիւնը ինդրումէ ամէն կերպ շտապել գալ հասնել Եջմիածին, առանց Պօլսոյ Փիրմանին սպասելու, որ յետոյ ևս կարելի է ձեռք բերել: Մի այս տեսակ հրաւիրանաց թուղթ ձեռք բերուեցաւ նաև Երևանի Մահամեդ Խանից. գրեց և Դաւիթը իւր կողմից որ շտապի գայ:

Անմիջապէս հրաւիրակները՝ Պառաւեան Յովհաննէս և Աշտարակցի Ներսէս վարդապետները Ճանապարհ են ընկնում դէպի թուխամիթ, ուր այն ժամանակ գանվումէր Դանիէլը և տեղեն հասնում

ապրիլի 7-ին⁵⁾: Քանի մի օրից յետոյ, այն է ապրիլի 11-ին (1801 թ.), Գանիկը իւր հրաւիրակներով դուրսէ գալիս Թոխաթից դէպի էջմիածին: Ճանապարհին ամենայն տեղ գաւառապետ փաշաները և բնակիչ հայերը մեծ պատուով ընդունում են նորը տիր հայրապետին և ուղևորում նորան գաւառից գաւառ: Ապրիլի 19ին Գանիկը հասաւ Տիւրիկ, ուր երևելիք քեզ օ սէ Մուստաֆա փաշայն իւր նստելու ձին, զարդարած ականակուռ և ոսկեայ քարերով, ուղարկում է նորան հեծնելու և քաղաք մտնելու: Այսպէս ամենայն տեղ մեծ ընդունելութիւն գտնելով, ապրիլի 28ին կաթողիկոսը հասաւ Արարիկը, ուր Փիլիպպոս ամիրայ Արփիարեանն, որ Սադր-Աղէմի սեղանաւորն էր, աղերսանօք խնդրեց քանի մի օր իւր տանը հիւր մալ:

Քանի որ Գանիկը կաթողիկոսը այսպիսի գանդաղ կերպով էր առաջ ընթանում, էջմիածնի մէջ նշանաւոր դէպքեր էին պատահում: Երբ որ մարտ ամսում հրաւիրակները ճանապարհ ընկան դէպի թոխաթ, դաւկիթը դիմեց իւր եղքօր աներոջ⁶⁾ Երևանի Մելիք Աղամալեանի օգնութեանը և Մահմետ Խանին կաշառելով, նաև վրացի իշխանազրւների միջնորդութեամբ, յիշեալ Ղորղանեան եպիսկոպոսը պատրաստվում էր կաթողիկոս օծուելու: Վանքի միաբանութիւնը, Սուրբ Իջման տեղի առաջ երգուեց որ բայց Գանիկը ոչ ոքի չըպէտք է ընդունէ կաթողիկոս և այս վճիռը յայտնեց Երևանի Խանին: Նոյն այս վճիռը և սպառնացող վտանգը Գանիկը հաղորդելու մոքով միաբանութիւնն ուղարկում է Ղաղար Խոստովանահայր և Ստեփան Գուչուրեան եպիսկոպոսներին: Սոքա հասան կարին, բայց տեսան որ

5) Նամակ Պօլսից (Նոր խան) ապրիլի 19, 1801 թուին, Մահատեսի Նիկողայոսից և Մահատեսի Գրիգորից Գանիկը կաթողիկոսին «...ապրիլի 8ին և Թոխաթու գիրդ ևս հասաւ ի նոյն ամսոյ 18ին, որ գրեալ էիր թէ սուրբ աթոռէն Յովհաննէս և Ներսէս վարդապետքն եկեալ են ի թոխաթ մահարով և խանի գրամք, և որպէս վայելն էր քանից անձանց ցուց տվաք՝ և բարւոք է ասացին, Տէր առաջնորդեացէ, և տեղու ևս արքունի դուռն և լիմացումն տվին, նոքա ևս խմացան և պէրաթի թէպտիրն (պատրաստութիւն) կու անեն. Աստուծով ամենելին անհոգ լիցիս և ուրախ սրտիւ և բարով երթաս.»: Այս նամակի մէջ առաջարկվում է, որ եթէ ճանապարհի ծախսի փող հարկաւորուի՝ Կարին այս ինչ անձննքներից առնուի:

6) Գաւաթիթ էնագեթցի եպիսկոպոսի եղբայր Բարսեղը, որ Երևան էր բնակվում, ամսումնացած էր Երևանի Մելիք Արքահամ Մելիք Աղամալեանի դստեր հետ, որոնցից ծնան Զոհրաբն և Գարսելանն:

Գանիկը դեռ ևս չէ հասած այնաեղ, վասնորոյ փայիկի (ոտքով վազող սուրհանդակ) ձեռքով նամակ զբեցին Գանիկը և ինդրեցին «Ներսէս վարդապետի կամօքն ի թես արծուոյ գնալ սուրբ «Աթոռն»): Փայիկը համումէ վերոյիշեալ Փիլիպպոս ամիրայի տունը, և նոյն հասած օրը, այն է տարիի 28-ին, Գանիկը դուրս է գալիս Մուշի վրայով դէպի Բայազէտ և էջմիածին: Սակայն արդէն ուշէր. Ճանապարհին, այն է Տարոնոյ Խնակնեան վանքը անցկացած, Շոռվերէն գիւղը հասած ժամանակ, Գանիկը լսումէ, որ Գաւիթը, Խանին կաշառելով, պարսիկ զինուորների բռնութեամբ և սպառնալքներով նոյն ապրիլի 28-ին (1801 թ.) օծուեցաւ էջմիածնի մէջ կաթողիկոս: Մայիսի 7-ին հասան Գանիկը յիշեալ գիւղի մէջ կարին գտնուած Երկրորդ հրաւիրակ եպիսկոպոսները: Այստեղից էլ շտապելով մայիսի 14-ին հասան Բայազէտ և նորանոր լուրեր լսեւ լով էջմիածնից, անխոհեմութիւն համարեցին պարսից սահմանը անցնել և գնալ սուրբ Աթոռը: Քանի մի օրից յետոյ, մայիսի 21ին, Գանիկը ուղարկեց Պօլիս իւր սպասաւոր Գիւմիշխանցի Մանուկը Շահինեան վարդապետին որ պատրիարքին և իշխաններին հասկացնէ գործի էութիւնը: Մանուկը հասաւ Պօլիս յունիսի 2ին: Բայց որովհետեւ այս վարդապետին շուտով չը յաջողեցաւ առաջնել գործը, Գանիկը ուղարկեց իրբե գործակից սորան Ներսէս վարդապետին, որ հասաւ Պօլիս յուլիսի 19ին (1801 թ.) և իջաւ Մանուկը վարդապետի մօտ: Նոյն միջոցներում, այն է յուլիսի 15ին հասած է Պօլիս և Գաւաթիթի ուղարկած և Ցովէկի արբաններկ Կարապետ վարդապետը, որ նոյն Գաւաթի ձեռքով արդէն եպիսկոպոս էր ձեռնապրուած: Սա, իւրեան կողմը ունենալով Պօլսոյ Յովհաննէս պատրիարքին, կարողացաւ մայրաքաղաքիս մեծամեծների և Յամանեան տէրութեան հածութեան թղթերը ձեռք բերել յանուն Գաւաթի և շտապով ուղևորուիլ դէպի էջմիածին: Մանուկը և Ներսէս վարդապետները գործի այս ընթացքից յուսահատ մնալով, լաւ իմանում էին, որ քանի Ցովհաննէս պատրիարքը կայ՝ իրանք

7) «...Բայց անդէն ի ծունկս անկանելով համբուրեմք գարշապարդ «մի քո կամացդ, այլ Ներսէս վարդապետի կամօքն ի թես արծուոյ գնալ «սուրբ Աթոռն»: Որ մի յառաջ անդ գտանելով քո՝ փափազն քո և մեր «լցոցի...»: Սորանից երեսում է թէ Ներսէսը որքան ցանկացող էր որ Գանիկը շուտ հասնի էջմիածին:»

անյաջող պիտի գտնուեն, վասնորոյ վճռեցին ամէն ձիգը գործ դնել նախ Յովհաննէսին պատրիարքութիւնից փոխելու: Յիշեալ վարդապետները իւրեանց նպատակին հանում են. նոյն տարուայ մէջ Յովհաննէսն աքսորվումէ Եւղոկիայ և Ներսէսի աշխատանօք Պօլսոյ պատրիարք է ընտրվում իւր վարժապետ խամսեցի Գրիգոր Եպիսկոպոսը⁸⁾: Նոյնմբերի 23ին Սամանեան տէրութիւնը հրովարտակ տուեց Դանիէլ անունով Դաւթին տուածը անվաւեր համարելով, իսկ 1802 թուի յունվարի 8ին Պօլսոյ պատրիարքը և ազգայինները գրեցին Էջմիածնի միաբանութեանը, որ Դաւթի կաթողիկոսութիւնը ապօրինի համարի ու շտապի Դանիէլին օծելու: Այս գրութիւնը, ինչպէս և հրովարտակը յանձնուեցաւ Ներսէսին Դանիէլին հասցնելու համար: Խօսք չկայ որ գործի այսպիսի ընթացքը գլխաւորապէս պարտական է Ռուսաստան գտնուող Եփրեմ արքեպիսկոպոսին, բայց և չի կարելի ուրանալ որ թէ նորան և թէ Պօլսեցոց գրդիչը Ներսէս և Մանուել վարդապետներն էին, որոնք ամէնքի հետ և ամէն կողմ նամակագրութիւն էին բացած Տաճկաստանի մայրաքաղաքից: Ներսէսի այս գործունէութեան մասին խօսելով, Դաւթի կուսակից Գէորգ Աղայեկեանը, որ Պօլսոյ մէջ ուուսաց գեսպանստանը թարգման էր, գեռ ևս 1801 թուի սեպտեմբերին գրում էր Էջմիածին, և Դուք գեռ անիործ էք, բայց ահա տեսէք՝ մի չնչին աբեղայ Ներսէսը բերեց այստեղ մի մեծ պարկ ոսկի և հինգ հակ Թիրամայ շալ Ճոթից: Նա 45,000 զուրուշ տուեց Բ. Դռանը և գորանով կարողացաւ աքսորել ի թուսած այստեղի պատրիարք և Յովհաննէսին և տեղը ուղիշին նշանակել: Նոյն իսկ Ներսէսը աշխատումէ Դանիէլի կաթողիկոսութեան բարաթը ձեռք բերել...:

⁸⁾ Գրիգոր պատրիարքը 1802 թուի յունվարի 1ին Եփրեմ արքեպիսկոպոսին ուղած նամակում գրում է՝ «...ինդրեմք և աղաչեմք յարածամ և գործակից և պաշտպան լիութը ի միասին, և զոր ինչ առ սրբազնութիւնդ և դրեալ են մերս հարազատ որդիկը՝ Ներսէս և Մանուել վարդապետքն, և այն ամենայն յատկապէս իմ խնդիրքն են և բոլոր ազգին, մանաւանդ և զի սրբոյ աթոռոյն հաստատութեան և շինութեան պատճառք...»: Յիշեալ պատրիարքը 1802 թուի փետրուարի 1ին գրում է Եփրեմին՝ «իսկ մեք ընդ ազնիւ ամիրայից բազմակնիք մահսեր մի սուրբ Աթոռոյ Եպիսկոպոսի կոպուաց և միաբանիցն և մահսեր մի խանին գրեալ, զամենայն յանձնեցաք Ներսէս վարդապետին և յղեցաք. յուսամ թէ մինչև ցգրութիւնս և ժամանեալ իցէ...»:

Նոյն Աղայեկեան Գէորգը 1801 թ. գեկտեմբերի 14ին գրած է գումարին՝ «...Եփրեմը Հիւմիային տէրութեան (Ռուսիայի) բարեկամութիւնը պէտի Դանիէլը իմացուցած է Ներսէս և Մանուել վարդապետներին: Ներսէս բերեց Բայազէթից 45,000 զուրուշ և դրամ և 25,000 զուրուշ Ճոթեղէնք պարգևների համար: Այս դրտմները Էջմիածնի գանձից են: Կաշառք տալով զանազան պատականների, նոքա կարողացան արտաքսել Յովհաննէս պատրիարք պրօքին և վերաբարձուցին աքսորից Գրիգորին և պատրիարք կացուցին նրան կ. Պօլսոյ: Նոքա կարողացան ձեռք բերել Դանիէլի կաթողիկոսութեան Ֆիրմանն ու Բարաթը. Եկեղեցեաց մէջ սկսեցին յիշատակել սորա անունը, միով բանիւ դրամի միջնորդութեամբ և նոքա գործումն ինչ որ կամին. ոչ դատաստան կայ, ոչ քննութիւն, ոչ Ահնոդոս....»:

Ներսէսի վրայ բարձած այս զըպարտութիւնների անհիմն լինիլը նորանով է երեսում, որ 1.) Դանիէլի կաթողիկոսութեան հաստատառութիւնը ձեռք բերուեցաւ ոչ կաշառքների միջնորդութեամբ, այլ Պետերբուրգ գտնուող Լազարեան եզրարց աշխատանօք և Եփրեմ եպիսկոպոսի աջակցութեամբ և 2.) որ այն միջոցներում ոչ Դանիէլը, ոչ Ներսէսը տակաւին Էջմիածնի չեին հասած, իսկ վանքի հարստութիւնը արդէն բոլորը Դաւթի ձեռքին էր: Ընդդէմ չենք, որ, ըստ տաճկական առվորութեան, Ներսէսը Պօլսոյ մէջ ամէն մի բարաթ, ամէն մի Ճոթի կտօր ստանալու կամ մեծամեծաց ներկայանալու համար ստիպուած էր ստակ ծախս անելու այս և այն ծառայից բաղչիչ (պարգև). տալով, բայց այդ բոլորը Էջմիածնի գանձից չեր կարող լինել և ոչ Ճշնամեաց հաշուած գումարին կարող էր հասնել: Աւելի հաւանական է կարծել, որ այդ ծախսը հոգողը Տաճկաստանի մէջ գտնուուղ Դանիէլեան կուսակցութիւնն էր:

Ներսէսի կ. Պօլսոյ մէջ գտնուած ժամանակը, Դանիէլ կաթողիկոսը իմացաւ, որ Դաւթի մէջ աշխատում է իրան ձեռք բերել, այդ պատճառով Բայազէթի մէջ մնալը վտանգաւոր համարելով, նա դեռ ևս հոկտեմբերի 8ին (1801 թ.) այստեղից փախաւ գնաց կարին: Դանիէլի կարին գտնուած ժամանակը 1802 թուի վետարիարի 21ին հասաւ Պօլսից Ներսէսը Առութանի հրովարտակը բերելով: Անցնում էին օրեր և Էջմիածնի մէջ միաբանութիւնը հետզհետէ ապստամբում էր Դաւթի գէմ, որ գումարութեամբ, ձեռով և բանտարկութիւնով կարծում էր թէ կարող է կուսակցու-

թիւն ձեռք բերել: Հոգւով վերաւորուած և մարմնով տանջուած էջմիածնեցիք գաղտնի գրումէին Դանիէլին, որ միմիայն իրան են ճառաջում կաթողիկոս և Դաւթին չեն ուզում: Բայց գիտենալով, որ Դանիէլը տակաւին էջմիածին դալ և օծուիլ չէ կարող, և կամքէ և մեզ ամենեցունցս, գրումէին նոքա, զի ի տէրութեանն Յսման՝ ցւոց օծցի և նստցի անդ օրինաւոր սրբազան Հայրապետն մեր, « և զդործ Հայրապետութեանն կատարեսցէ սրբագրծերով զմեռոն».

Միւս կողմից Եփրեմ արքեպիսկոպոսն էլ, որ այդ ժամանակ Ուռւսաստանում առաջնորդի պաշտօն էր վարում, ձեռք բերեց Դանիէլի հաստատութեան մասին ուռւսաց կառավարութեան բարեհաճութիւնը և կայսեր կողմից ընծաներ ուղարկել տուեց յիշեալ կաթողիկոսին. իսկ ինքը՝ Եփրեմը՝ Խորհուրդ էր տալիս Դանիէլին այլ ևս չէտաձգել ու օծուիլ Տաճկաստանի սահմանում: Ներսէս վարդապետը, համամիտ լինելով Եփրեմին, կարողացաւ Դանիէլի համաձայնութիւնը ստանալ. այնուհետև Ներսիսի (որքան լսած ենք) հրաւերքով ժողովվում են Երեքխորան (Խւչ - քիլիսա) անուանեալ Սուրբ Յովհաննու վանքը, որ Նպատ լերան ստորոտումն է, Աղթամարայ կաթողիկոս կարապետը և քանի մի նշանաւոր վանորէց վանահայրեր: Ընդամենը ժողովուած էին, բացի Աղթամարայ կաթողիկոսից, 15 եպիսկոպոս, 28 վարդապետ և շատ քահանայ:

Սոքա նախ դատապարտեցին Դաւթիթ կաթողիկոսին և նորա ձեռնադրած եպիսկոպոսներին՝ կարապետ և Գրիգոր վարդապետներին, ապա հանդիսաւոր կերպով օծեցին Դանիէլին կաթողիկոս, տուին նորան օրհնել մեռոն և ձեռնադրել վարդապետներից երկուսին եպիսկոպոս: Այս հանդէսը կատարուեցաւ 1802 թուի մայիսի 25ին: Այնուհետև անցքի մանրամասն եղելութիւնը նկարագրելով՝ մայիսի 28ին ամէն կողմի հայոց ըրջաբերականներ ուղարկուեցան: Այդ ըսրջաբերականի մէջ ստորագրողների քսանեւութերորդն է Ներսէսը, որ գրած է այսպէս՝ «Ն ԵՐՈՒ Է Ա ՎԱՐԴ ԴԱՎԵԹ, ԲՆԻԿ ՄԻԱԲԱՆ և ՍՈՒՐԲ Էջմիածնի և ՀԱՐԱՊԱՄ ՂԱԼՈՒԹԻՐ ՀՈԳԵՐՆԹԻՐ և ՎԵՐԱՊԵՐ ԵՐԻՆ ՄԵՐՈՒՄ»: Յովհաննէս կըլկըլ անուանեալ և Յովհաննէս Աւրանցի եպիսկոպոսները 1802 թ. յունիսի 1ին Եփրեմին ուղարձ նամակում հաղորդելով կաթողիկոսի օծումն, Ներսէսի մասին գրում են «...մինչեւ շնորհալին Ներսէս էր ի մեծն Պօլիս ի ծննդեան պահոցն և այլն»: Պօլսոյ Գրիգոր պատրիարքը յատուկ կոնդակով պատուիրեց որ իւր վեճակի մէջ 1802 թուի յուլիսի 13ից

սկսած Դանիէլ կաթողիկոսի անունը յիշուի պատարագի ժամանակ:

Դաւթիթը այս բոլորը լսելով, ինքն ևս ժողով է գումարում քանի մի եպիսկոպոսներից և վարդապետներից, ուր բանադրեցին Դանիէլին: Այնուհետև Ստեփան Քուչուրեան եպիսկոպոսին և Ղազար Վեցիկեանց վարդապետին ուղարկեց Դաւթիթը Պօլիս Դանիէլին գահընկեց անելու: Սոքա, տեղ հասնելով և կաշառով մեծամեծներին իրանց կողմը գցելով, հոկտեմբերի 11ին նախ փոխեցին Գրիգոր պատրիարքին և ուղարկեցին սորան Քաղկեդոն, ապա գեկտեմբերի 3ին վերադարձրին աքսորից իւրեանց կուսակից Յովհաննէսին, որ նորից պատրիարքական գահը բազմեցաւ: Սա հրամայեց դադարացնել Դանիէլի յիշատակութիւնը և յիշել Դաւթիթն: Այդ միջոցում Պօլսոյ գտնուող Դանիէլիան Մանուկը վարդապետը հալածուելով կատարած այստեղից Ուռւսաստան:

Եփրեմ առաջնորդը Ուռւսիայ և Յովհաննէս Գեղարդակիրը թիֆլիս դեռ ևս մայսի 19ին ձեռք էին բերած Աղեքսանդր կայսեր հրովարտակը Դանիէլի հաստատութեան մասին. իսկ ուռւսական կառավարութիւնը քանի մի անգամ զիմեց Նրեւանի Մահմադ խանին որ յիշեալ կաթողիկոսին պաշտպանութիւն ցոյց տայ, բայց Պօլսոյ ուռւսական գեսպան Թամարան, իւր թարգման Գէորգ Աղյօեկեանի դրդմամի, գաղտնի կերպով ամէն ճիգն էր թափում Դաւթիթն օգանելու ընդդէմ իւր տէրութեան կամքին: Մինչդեռ Էջմիածնի մէջ գերի մնացած միաբանութիւնը վերին աստիճանի յուսահատուած Դաւթի բանութիւնից խնդրագրեր էր ուղարկում ուռւսաց կայսեր, նոցա սինօդուին և Աբրոսի միտրապօլիտին, յանկարծ լսուեցաւ, որ Օսմաննեան տէրութիւնը, դարձեալ Թամարայի դրդմամի, բարախ է հանել որ հրաժարեցրած Գրիգոր պատրիարքն ու Դանիէլ կաթողիկոսը Էջմիածին: Բայց մինչեւ այս հրամանի գալը Դաւթիթը համոզում է Մահմադ խանին, որ իւր սպասաւոր Շիր-Ալի բէկին Քօլեան Աբրահամ եպիսկոպոսի հետ ուղարկէ Բայազէթ Դանիէլին և նորա համախոհներին (որոնց մէջ էր և Ներսէսը) կաղանաւորել և բերել Էջմիածին: Շիր-Ալի բէկը և Աբրահամ եպիսկոպոսը եկան Բայազէթ և քանի մի օրից յետոյ Դանիէլին իւր սպասաւոր Ներսէս վարդապետով և այլ համախոհներով բերին Էջմիածին: Այս եղելութիւնը ինքը Ներսէսը մանրամասնաբար գրում է Նրեւանից այն ժամանակը Հնդկաստան գտնուող ծերունի Յովհաննէս վարդապետին:

Դնչպէս երևումէ այս նամակից թ), Ներսէսը այստեղ բաւական նեղութիւն է կրել 32 օր բանտի մէջ մնալով և քանի մի անգամ նրեանի խանի մօտ տարութերուելով։ Թէև ռուսաց տէրութեան միջամտութիւնը յօդուտ դանիէլի շատ էր ուրախացնում Ներսէսին,

9) «Բարձր արժանապատիւ սրբոյ հօր իմոյ խոհեմառատ և հանճառ՝ բառը ծերունազարդ Յովհաննէս վարդապետի ի Հնդիկս սրբոյ աջոյն և Խայն։ Ապա հարցաներով զողջունէ սիրելի կենացդ ծանուցանեմ սրբութեան ձերում, զի երբ անջատեալ ի մննջ գնացիք յարգութիւն ձեր և մեք ակնաղէտ սպասէաք առողջութեամբ ժամանելոյ գրոյն ձեր, ընկառաք ի 23 նոյեմբերի (1802) ցցանկալի զրութիւնս ձեր, զոր զրեալ էք ի Պաղպատու, և այս ինչ ուրախութեամբ և ցնծութեամբ կամէաք զրել զպատասխանին, ոչ յետ բազում աւուրց անցանելոյ՝ ի 27ն նորին ամսոյ ենաս ի վերայ մեր յանկարծակի պատերազմ չարին առաւել սաստկութեամբ, որում ոչ ոք ունէր ակն ամեննեին՝ ոչ մեք և ոչ ընդհանուր ազգ մեր Քանդի պատկերն նեռին Դաւիթ ապօրինաւոր՝ բարբարոսովթեամբն բռնացեալ, որ առաքեալ էր զՍտեփաննոս վարդապետն ի Կ. Պօլիս առ Ղրիմնցի Գէորգ Աղայեկով, զնա ոչ կարողացեալ հանել անտի Գրիգոր պատրիարքն հրովարտակաւ Սուլթանին, որով կամէր առաքել զնա առ սրբազան մեր, մնաց նա անդէն յայնչափ երկար ժամանակ, և յորժամ ի կողմանէ ազգին Հայոց ըստ ամենայնի եղեն յուսահատ և տեսին՝ թէ ոչ բնաւ ամեննեին կամին ճանաչել զԴաւիթ, սրտմտեալ այնուհետեւ բաց ցին զմենձամեծ դուռն զրամոց, և ի ձեռն Գէորգ Աղայեկովի և չար տէր Սահփաննոսի, որ երբեմն ի կողմանէ Յովսէփայ յանուն դպրատան ժողովը զարդիւնս բարեպաշտ Հայոցն Հնդկաստանի, կաշառեալ զդեսպանն Իուստաց և, առեալ ի նմանէ զթոյլատութիւն ծածուկ, ապա մատուցանն Սուլթանին Յսմաննցոց՝ ըստ սմանց 300 քսակ դրամ, և ըստ սմանց, և մանաւանդ բազմաց—500 քսակ (250,000 զուրուշ կամ մօտ 17,500 ռուբլի այժմեան փող), և այսպէս զօրութեամբ մեծ դրամոց լրելեայն, թարց իմանալոյ ումեք ի մեծամեծաց կամ ի հասարակաց հայոց, յեղակարծիւ տան ձեզ ի պատրիարքութենէ աթոռոյն իւր ըզ-Գրիգոր պատրիարքն և հանեն գհովարտակ՝ զի պատրիարքն և գաղդանտիր համայն և Աստուածաբնուր կաթողիկոսն զտէր Դանիէլ, զերկուսին ևս առցեն ի սուրբ Եղիշածին։

Ա Եւ ըստ այսմ մինչ հանդերձեալ մեք նատէաք յապահովի ի երեք վանսն (Խչքիլսայ) ի տեղի մեր, կոչեաց զմեղ Բղեշին Պայազիտոյ առ ինքն ի 27ին նոյեմբերի (1802), և սրբազան տէրն մեր չղիտելով ինչ՝ զնաց առ նա միամտութեամբ սրտի և հասեալ ի քաղաք անդր՝ զշն-ջիւր բանից զրեցելոց յերկրորդում աւուր հասու եղաք որ նորա զափուք քեամեապին ևս ըստ տնօրէնսութեան Ղրիմնցոյն և Ստեփաննոսեանց

բայց միւս կողմից յիշեալ խանի յամառութիւնն ու կոպիա վարժունքը վերին աստիճանի գրգուռում էին կրակոտ Ներսէսին Դաւիթը մինչև անգամ միտք ունէր սաստիկ պատժել Ներսէսին, գիտենալով որ սա էր Դանիէլի գլխաւոր պաշտպաններից մէկը. նա խնդրումէ

ՏԵՐՅ-ՀՀՕՍ
44/31

« գրեալ է առ նա թէ՝ Դավիթն վերահաստատեցաւ հրովարտակաւ Սուլթանին ի բռնաւորութեան իւրում և ես խնդրեմ զի դու ևս բարեկամ և եղիցին նմա։ Առ որ և տէրկաբն ութիք բղեշին այն կոչեալ էր զըըր բազան տէրն մեր, որպէս զի յայտնեցէ նմա զայնպիսի անցմն Կ. Պօլիսոյ կամ իցէ զի թիրես զրուեալ զնա բարեկամութեան եղանակաւ յափտակել կարողացի ինչ։ Բայց մինչ մեք մտաք ի Պայազէտ, ի նմին և առուր սատակեցաւ և մայր Բղեշին, որոյ աղազաւ և մեք մնացեալ անց չկարողացաք տեսանել զնա զաւուրս ութին, և յայնքան ալուրն ժամանեալ առ Դավիթին սուրհանդակն աւետաւոր, զոր յղեալ էին Ղրիմնցի և երկու կարգաւորքն, նա ևս առաքեաց ի Պայազիտ առ Բղեշին հաւակատն իւր Փօրեան Ագրահամ վարդապետն՝ միաբան Տաթեռու և խոստացեալ Բղեշին զնօ քսակ՝ խնդրեաց զի առաքեսցէ զԴանիէլ սրբազանն էիրովքն ամեննեղումբք, և ահա այսու բացաւ դուռն Բղեշին, որում ոչ ունէր ակն ինքն։ ունտի որ կոչեալ էր զորբազան տէր մեր իբր խորհրդակողի ընդ նմա բարեկամարար՝ յորժամ կոչեալ զնա և զմեզ առ ինքն և ի սենեակ առանձնութեան իւրոյ խօսիլ սկսաւ ստութեամբ և ասէ՝ Սուլթանն մեր հրովարտակաւ իւրով հաստատեալ է վերստին զգայթական գոսութիւն Դավիթի և մեզ զրեալ է կոչել զքեզ, զի թէ յօժարեսցիալ դու և տալ գանձարանի Սուլթանին զքսակն 500, զոր խոստացեալ է Դաւիթ, կրկն եղիցիս դու կաթողիկոս ազգի քում. իսկ թէ ոչ կամեսցիս տալ զայնչափ խնդրմունս Դավիթի, զնացես դու առ Դաւիթն ի սուրբ Եղիշէմին, զի նա այնունետեւ հատուսցէ զիսոստումի իւր։ Առ որ սրբաշամն մեր զպատասխանի նմա զայս ասաց թէ տամես և ոչ զմի քսակ վասն վարելոյ իմ զիշմանութիւն հոգնորական։ իսկ զի Պայազիտ խոստացեալ է, տացէ ինքն զմուստացեալն իւր և ինքն գիտացէ և ազգն հայոց որպէս և համեստանի առնել։ իսկ ես լուսմ յիշմանութեան կաթողիկոսութեան յայսմէնետէ, այլ ոչ երթամ առ Պայազիտ, մինչեւ առաքեսցէ զիս Սուլթանն հրովարտակաւ իւրով և բռնութեամբ իւրով. և զայս ասացեալ ել յերեսաց նորա և զնաց ի տեղի ի տուն Նաւասարդեան Հայրապետ աղային, իսկ ապա զինի առաքեալ անօրէն Բղեշին զքէնիայն իւր խօսիլ աղա ասացեալ եղիտի առ սրբազան տէրն մեր և փոխեալ զբանն և ասէ՝ եթէ կամիս, տացես ինձ զնօ քսակ միայն և ես առաքեալ զայս ի Պօլիս առ Սուլթանն դարձուցից զկամս նորա, զի դու կացցես և մնացես ուր և կամք իցեն քո, և վասն կաթողիկոսութեան ինքն զիս տացէ ում և կամեսցի տալ։ Այլ սրբազան տէրն մեր այսմ ևս զպա-

Երեանի խանին որ իրաւունք տայ իրան տանջել զներուէս պաշաւ և տօնեայ դանիէլի, քանզի նա եղել զրդիո որ ընդդէմ ձեր (խանին) և զինեալ ազգ և աղինք ջանացին ընկենուլ զիս և Եղծեալ աւեւ և բեցին զանուն ձեր (խանի) և մեր և այն: Այս տանջանքը պիտի

և տասխանի տուեալ՝ ասաց, ես պարտաւոր եմ մատուցանել զանձն իմ ի գոհ յանուն Աստուծոյ իմոյ, այլ չկամիմ և ոչ տամ բռնաւորաց և ոչ զմի փարայ, յորմէ արգելեալ կան օրինօք ամենայն քրիստոնեայք, մանաւանդ եկեղեցականք. ևս առաւել ի բանի աստուածային և հոգմոր եկեղաւասութեան. քաւլիցի ինձ ասէ կովսել զօրէնս Աստուծոյ իմոյ և մատուկ զենէնի զնողիս իմ տալ վասն պատուոյ իմոյ կամ ապրեցուցանելոյ զանձն իմ այլ ևս յաւուրս սակաւաւորս զգանձս տաճարին Աստուծոյ և կարդինս ազգաց քրիստոնէից, զոր իւրաքանչիւր ոք մի մի տուակ մատուցեալ են ի վայելս հոգեւրականաց ի զին մեղաց իւրեանց, Եւ եղել յորժամ լոււաւ զայս անօրէն ագան և այսպէս յուսակատ եղել որ չունի ինչ շահիլ ի նմանէ բնաւ, ապա հատեալ իսպառ զկալ բարեկամութեան և բարձեալ զամօթ յերեսացն, պնդեաց այնուետե ողոքանօք և սպառնաք, զի յօժարեսցի ի նմին ժամանակի զնալ առ Դաւիթն, որով և Աստուածարեալ սրբազանն մեր կոչեալ առ ինքն զմիաբանսն ամենայն յորդորեաց զնոսա և քաջալերեալ զսիրտ ամենեցուն բանիւք Աստուածային, երթիցուք, ասէ, եղբարք վասն անուան Տեառն մերոյ ի զենումն և ի ման, որով և փառաւոր արարեալ զանուն Տեառն Աստուծոյ մերոյ և ընկալցուք թերես զողորմութիւն Նորա յահազին ատենի արդարութեան դատաստանի Նորա, զի լաւ է ասէ քաջութեամբ փոխանակել զսակաւ աւուրս մարմնոյ կենաց մերոց ընդ յաւերժական կենաց հոգուոյ քան վատ և նել զվաստակս, զոր ոչ մեք քրտամբ երեսաց վաստակեցաք և տուեալ անհաւատից զժառանգութիւն և զգանձս տաճարի Աստուծոյ սացուք զերասանակ հոգուոյ մերում ի ձեռս ոսոխի հոգուոյ մերում սատանայի, որ զայս ամենայն առնէ նա ինքն ամենաչարն ի կորուսանել զնողիս բազ մաց: Եւ այսպիսի բանօք բազմօք շարժեալ ի կամաւոր ման զնողիս մերոցն ամենեցուն ել նոքօք հանդերձ և եկն ի սուրբ Էջմիածին ընդ Քօն Եեան Աբրահամ վարդապետի և Շիրալի թէկ անուն պարսիկ նախարարի և խանին Երեանու: Լուր զամլսելս և զկեցուցիս սրաի և ոգուոյ, ով հայր պատուական, զի ի մտանեն մեր ի սուրբ Էջմիածին արկեալ զմեզ ի կալարան ներքին Ղաղաքապատին որոշեցին զայլմն, և միմիայն զսրաւ զան տէրն մեր և զնուաստու ընդ տիրացու Բաղդասարին պահեալ անդէն զաւուրս 32² անտեսանելի ի մարդկանէ՝ յիւրաքանչիւր մի բոպէ իսոր հէին զշարիս հազարաւոր՝ կորուսանել զկենդանութիւն մեր կոտամահ տանջանօք: Այլ Տէր, որ ողորմի յորժամ և կամի պահել անխափան զնորհս ողորմութեան իւրոյ զորացոյց զնողի հզօր կայսերութեան ուսուաց և ա-

կրէր Ներսէսը, բայց սորա բարեկամները, որոնց ինքը «Հարազատ» անունովէ վերապատվում, «Հետամուս եղեալ զնեն զկեանս մեր և երկրորդ (?) անգամ գնոց զնոյց խանի մերձաւորներին երկու ժամացոյց և 210 մամառ ոսկի բաժանելով:

Ամենայն մեծամնծաց և զօրապետաց նորա, որ յօրէ անտի մտանելոյ մեր և սուրբ Աթոռն հետզհետէ ամսիջաբար յաճախեալ զեսպանաց առ խանն և Երեանու վասն պահպանելոյ զսրբազան Տէրն մեր արժանաւոր պատուք և մինչև ցինիլ կայսերական բարեհածութեան, այնքան զօրեցին մինչև բուռն իշխանութեամբ խանին Երեանու հանեալ զմեզ ի կալարանէ անտի և նստեցուցին ի սենեկի միում, ի կարգի միաբանիցն, ուր կացաք ընդար և ձակութեամբ ի սակաւ ժամանակս. Եւ յաւուրսն յայնոսիկ բերաւ անդ և Գրիգոր պատրիարքն, զոր ևս արկեալ իսկոյն ի մշտագիշեր կրկնայարկ և անլոյս բանտ՝ թողին զնա անտէր զաւուրս 8, և զրկեալ զնա յամենայն և կենցաղական բարեհամանութեանց, մինչև եկն հճաս առ խանն Երեանու այլ միւս զեսպան այր երեելի, որում թամրազ Լշիկաղասի ասէին. սա և եկն բազմութեամբ 32 ծառայից, զոր հրամանաւ մեծ և ինքնակալ կայ- և սերն ուռաստաց առաքեալ էր նորեկ կուսակալն կողմանցն Պաւլ Յիշիա- և նովն՝ հանդերձ մեծահրաման զրովք մեծ եպարքոս Ալեքսանդր Վորօն- և ցովի առ խանն Երեանու և առ կոյր Քէլպէլի խանն Նախիջևանու յա- և զագս նստուցանելոյ յաթոռ սուրբ Էջմիածնի զտէր Դանիէլ սրբազանն ըստ բարեհամութեան նորին կայսերական մեծութեան: Այլ զի համեցեալ էր Տէր ողորմի համօրէն երկրի Արարատու և Աստուածակերտ սրբոյ ա- և թռոցն և կամեցեալ էր նմանեցուցանել զարազատ որդին և զիսկական և քաջ յաջորդն հօրն իւրում և հեղինակին սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և խստացոյց որպէս ֆարաւոնին զսիրտ հոգեկից եղբարցն Դաւիթի խանիցն և ասեմ երկաքանչիւրոցն, որք ոչ խոնարհեցան բարձր հրամանաց կայսերն և ոչ համոզեցան ի բանից զեսպանին առ նստուցանելոյ յաթոռ զսրբա- և զան հայրապետն, այլ որպէս հաւասար ընդ հաւասարի կամեցեալ փո- և խանակաւ կատարել զհրաման տիեզերասաստ ահեղ կայսերութեան, ա- և ուաքեալ զերկուս մ. ծամեծ նախարար ետուն կնքել զամենայն զրունս և սենեկաց կաթողիկոսարանին Էջմիածնի և ըստ ինդրոյ զեսպանին հա- և նեալ բարձր իշխանութեամբ ի յանջոյս բանտէ զԳրիգոր պատրիարքն, և թողին յարտասու զժարաւուն արեան ծառայիցն Աստուծոյ Դաւիթ գայլ և ար աբացին և բերին յերեան առ սրբազան մեր, որ ի բազում ա- և ւուրց հետէ տարեալ էին անդ յառաջին աւուրս զալտեան զեսպանին, և բերին ընդ նմա առ սրբազան հայրապետն և զնուաստ, ուստի զրեմ զայս ամէն առ ձեզ: (Ստորագրած) Ներսէս աբեղայ: Ելրեան. 1803. (ամիսը չէ նշանակած):

Գ.

ՄԻԶԱՄՏՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԱՑ ԵՒ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ:

Ռուսաց տէրութիւնը հայոց կաթողիկոսական ընտրութեան մէջ առաջին անգամ խառնուեցաւ Յովսէփ Արդութեան արքեպիսկոպոսի ընտրելու ժամանակը: Յիշեալ արհւոյ վախճանելուց յետոյ Թիֆլիս գտնուող Արդութեան և Բէզմարէգեան հայ իշխանները, Յովսէփի սպասաւոր Գրիգոր վարդապետի հետ միանալով, Դաւթի կողմը բռնեցին և Վրաստանի ռուս կառավարիչ Կովալէնակոն իրանց դիտաւորութիւնների հզօր սպաշտան ունեցան: Վրաց արքայաժառ ռանգ Դաւթիմը նմանապէս այդ կուսակցութեանն էր պատկանում: Մեր Խնդրից դուրս է քննել, թէ ով դոցանից և ինչ շահեր էր սպասում Դաւթի կաթողիկոսանալուց: Այսքանը միայն կասենք, որ բարձրագոյն պետութիւնը, խարուելով Կովալէնակու տուած տեղեւ կութիւններից, համաձայննեցաւ Դաւթի կաթողիկոսութեանը: Գուցէ Կովալէնակու աշխատութիւնը այդ յաջողութիւնը չունենար, եթէ Պօլիս գտնուող ռուսական դեսպան Թամարան Դաւթի ջերմ կուսակից և Դանիելի անհաշտ ժշնամի չը գտնուէր: Ըստ երեսոյթին ռուսական կայսերական հրովարտակը Դաւթի հաստատութեան մասին, այդ խնդրին վերջ էր տալիս ընդդէմ ցանկութեան ընդհանուր հայ ազգի: Սակայն չանցաւ երկար ժամանակ՝ Եփրեմ արքեպիսկոպոսը և Պետերուրդ գտնուող Լազարեանները հասկացրին տէրութեան նախարարներին գործի Ճիշտ էութիւնը և թագաւոր կայսրը շատ պեց վերականգնելով ազգիս իրաւոնքը: Կամենալով, որ Եֆմաննի կաթողիկոսը, իրրեւ հոգեոր Պէտ հայ ազգի, ճշտապէս հայոց կամօք և ցանկութեամբ ընտրուի և ոչ թէ օտարաց թելտղութեամբ ու միջամտութեամբ, Երիտասարդ կայսրը Դաւթի ընտրութիւնը անվաւեր համարեց և Դանիելին հայոց օրինաւոր կաթողիկոս ճանաչեց: Կայսեր այսպիսի վճիռը բոլորովին անսպասելի էր Թամարա դեսպանի և Թիֆլիս գտնուող Կովալէնակու համար, սոքա թէ և ստիւ պուած էին Ճշգութեամբ կատարել իւրեանց արքայի հրամանը բայց ներքուստ գաղտնի չէին գործում Դանիելին և Դանիելին կատարել իւրեանց արքայի հրամանը, վերջինս այսպիսի վերջին համարական գործում էր Եփրեմ արքան և Եփրեմի ամառա սպանացման բռնադրութիւն տալ: Այս մասին Ներսէսը գրումէ Թիֆլիսից (վետրուալ Յ, 1803 թ.) Եփրեմին՝ «մահու սպանացման բռնադրութիւն տալ» գրբաղան և տէրն մեր (Դանիել) տալ զձեռագիր ինքնակամ՝ հրաժարանաց. և զոր զի շահեսցուք զկեանս մեր և զհոգի նորին խստամրտի (Դաւթի) և ըստ աղերսելոյ տառապեալ միաբանութեան ետուք նմա զկեղա և ծեալ զիր որպէս ինքնակամ՝ հրաժարանաց և այնու մեղմեալ և զնա ի չար խորհրդոց իւրոց ապրեցուցաք զանձն սրբազան տեսառն և մեր և զանձննս մեր ամենեցուն առ ժամանակաւն, մինչեւ եկին և ի նորին գերազանցութենէ ենարալ Լազրովին՝ այր մի և տիւ բացու Գաբրիէլն Տիվ Մովսէսի Խէլթուպանեցոյ որդի առ խանն և Երևանու հանդերձ յանձնարարական գրովք յիշեալ ենարալին՝ թէ և պաշտպանեցէ նա վարբազանն մեր որպէս զայր մի երեսելի և քաղը և ցրացնեալ յաշ նորին ամենաողորմած սուրբ կայսերակութեան...»

Խստութեամբ պահանջելով որ կայսերական հրամանը կատարուի, բայց խանը ոչ միայն չօգնեց Դանիելին, այլ ուուսաց միջամտութեանը թշնամական աչքով նայելով, ամէն միջոց գործ զրեց որ Դանի նիէլն ոչինչ յարաբերութիւն չունենայ Ռուսիայի հետ: Մամադ խանը մինչև անգամ զօրքի պատրաստութիւն տեսաւ որ եթէ սղւսները դիտաւորութիւն ունենան բռնի կատարել տալու իւրեանց կամքը, սա ևս զէնքով ընդդիմանայ: Կնօրինգը կրկնումէր իւր միջամտութիւնը Դանիէլի մասին. Մամադ խանը իւր պատասխանի մէջ զարմանք էր յայտնում, որ վարդապետների խնդրին ռուսները քաղաքական խնդրի նշանակութիւն են ուախս: Մինչ այս մինչ այն 1802 թուի նոյեմբերին Խւշ-Քիլիսայից եկաւ Թիֆլիս Մինաս Խալիս կոպուր հետը նոր օրհնեալ մեռն բերելով: Սա անմիտիթար տէղեկութիւններ հաղորդելով հայրապետի դրութեան մասին, բորբոքեց Թիֆլիսի առաջնորդ Յովհաննէս Գեղարդակրի եռանդը աւելի ևս աշխատելու յօգուտ Դանիէլի: Դաւթեանք ևս քնած չէին, Թիֆլիսարնակ իշխան Բէզմարէգեանը, որ այն ժամանակ տէրութեան դանձապահի պաշտօնն էր վարում, անդադար նամակներ էր սուանում էջմիածնից և ամէն կերպ յորդորում Կովալէնսկուն յօգուտ Դաւթի:

Այդ միջոցներում Դանիէլը Ներսէսի հետ միասին արդէն բերուած էր էջմիածին և Դաւթի բռնութեան ներքոյ էր գտնվում. Վերջինիս յանդուգն պահանջման համեմատ՝ Դանիէլը պարտաւորուած էր ինքնակամ՝ հրաժարականի ստորագրութիւն տալ: Այս մասին Ներսէսը գրումէ Թիֆլիսից (վետրուալ Յ, 1803 թ.) Եփրեմին՝ «մահու սպանացման բռնադրութիւն տալ» գրբաղան և տէրն մեր (Դանիէլ) տալ զձեռագիր ինքնակամ՝ հրաժարանաց. և զոր զի շահեսցուք զկեանս մեր և զհոգի նորին խստամրտի (Դաւթի) և ըստ աղերսելոյ տառապեալ միաբանութեան ետուք նմա զկեղա և ծեալ զիր որպէս ինքնակամ՝ հրաժարանաց և այնու մեղմեալ և զնա ի չար խորհրդոց իւրոց ապրեցուցաք զանձն սրբազան տեսառն և մեր և զանձննս մեր ամենեցուն առ ժամանակաւն, մինչեւ եկին և ի նորին գերազանցութենէ ենարալ Լազրովին՝ այր մի և տիւ բացու Գաբրիէլն Տիվ Մովսէսի Խէլթուպանեցոյ որդի առ խանն և Երևանու հանդերձ յանձնարարական գրովք յիշեալ ենարալին՝ թէ և պաշտպանեցէ նա վարբազանն մեր որպէս զայր մի երեսելի և քաղը և ցրացնեալ յաշ նորին ամենաողորմած սուրբ կայսերակութեան...»

Սակայն գեներալ Վազգելի ուղարկած անձը իւր նպատակին ըստհասաւ, վասն զե կովալենսկին (որի ձեռքին էր Վրաստանի վարչութեան քաղաքական մասը) մի և նոյն ժամանակը հաղորդել էր խանին, որ Դաւթին ձեռքից եկած օգնութիւնը ըստ խնայէ: Չանցաւ երկար միջոց՝ Վրաստանի զինաւոր հրամանատար նշանակութաւ իշխան Ցիցիանովը, որին կայսրը յատուկ պատուիրած էր վերջ տալ էջմիածնի խանակութիւններին և օգնել դանիէլին: Դեռ ևս Վրաստան ըստ հասած՝ Ցիցիանովը մարդ ուղարկեց Արևեանի խանին պահանջելու, որ Դանիէլին ազատութիւն տայ և թէ իւր բռնի և անպատշաճ վարմունքի համար (Հայոց օրինաւոր կաթողիկոսի վերաբերութեամբ), խանը ստիպուած կը լինի պատասխան տալու ոչ թէ միայն բերանացի կամ գրով, այլ թէ իրօք, որի մասին յետոյ շատ կը զջայ: «Իսկ յետ ոչ բազում աւուրց, զրումէ Ներսէսը վերցիշ շիալ նամակի մէջ, զայ հասանէ հրամանաւ նորին բարձր գերաւ զանցութեան պայծառափայլ քնեալ Պաւլ Դիմիտրիչ Ցիցիանու վին Թամրազ Էշիկաղապաշի (իշխան Ումաս Օրբէլեան)` յաւուր ծրագալրոցին ծննդեան և ի բազում աւուրս վիճաբանեալ ընդ խանին. զինի բազում ել և էջս առնելոյ զհրաման հանեալ խանին առ Դաւթին՝ ևտ տանել յնրեան զսրբազան Հայրն մեր հանդերձ պահապանօքն ըստ առաջնոյ կերպին: Այս անգամ խանը հրամայեց որ Էջմիածնի վեհարանի բոլոր զոները կողպուին և բանալիները յանձնուին պահպանելու ուժ եպիսկոպուների: Դաւթին տուին միմիայն երկու սենեակ: Այսուհետեւ խանի պահանջմամբ Պօլսոյ ընկած պատրիարքին և Ներսէսին բերեցին էջամիածնից նրեան: Այս մինչ մեք անդ յնրեան էաք, շարունակումէ նոյն նամակի մէջ Ներսէսը, այլ ևս խորհեալ զինորհուրդ խանին նրեանու ի 22 յունվարի զիրկին մուսպաշիրս յղեալ ետք բերել յնրեան և մարդն անօրէն՝ Դաւթիթ բռնաւոր, զոր և բնակեցոյց ի տան մելիք Աբրահամ Համալսոհին նորա և ապա ի 24 նոյն ամսոյ վթամրազ Էշիկաղապաշին և զԱյգազ խան Սուլթան անուն ոմն ի հաւատարմաց իւրոց և զմեզ ևս ընդ նոսա, այսինքն զդրիգոր պատրիարքն և զնուասոս, ձանապարհորդեաց ի Թիֆլիս քաղաքս այսու դաշամբ՝ թէ Շերիֆ փաշան Ախալցխայու փառ խուցեալ ի տեղուջէ իւրմէ եկեալ անկեալ յիմ օճաղն և ես կամիմ զե զսա զօրօք իմնվք տարեալ նստացից ի տեղի իւր: Վասնորոյ դուք, որ ի վերայ Վարսայ թարց մեծ կամ փոքր զեաս

« ինչ հասուցանելոյ նոյս անցուցից զօրովք իմնվք զՇերիֆ փառ շայն ի Ախալցխայ և ես լսու հրամանի ձեր նստեցուցից յաթոռ և հայրապետական զդանիէլ կաթողիկոսն, իսկ եթէ դուք զայս իմ և լմնդիրս ոչ կատարեցէք ասէ և ես ոչ կատարեցից զինդիր ձեր: Քանդի մեք հնազանդ եմք Շահին մերոյ և ոչ օտարաց և այն: Եւ ահա այսու բանիւ եկեալ ժամանեցաք մեք աստ ի Թիֆլիս քաղաքս ի 31ն յունվարի (1803 թւի):»

Այդպէս ահա Ներսէսը, Դանիէլին թողնելով նրեանում, ինքը եկաւ Թիֆլիս: Բայց ի՞նչ նշանակութիւն ունէր նորա Վրաստան գալը. ի՞նչպէս վատահացան խանը և նոյն իսկ Դաւթիթ կաթողիկոսը թողնել նորան պարսկական սահմանն անցնելու: Այս հարցերը մեկըն վումին միմիայն մասամբ:

Կախ և առաջ՝ երեւումէ որ խանը արդէն փոխելէր իւր քաղաքականութիւնը թէ դէպի ռուսաց տէրութիւնը և թէ դէպի Դաւթիթը ու Դանիէլը: Առաջնորդ հիմայ այնքան ընկած էր, որ այլ ևս չէր կարող ուզածի չափ խանի վրայ Ներգործել և կամ Ներսէսին վասանել: Եթէ միայն Ներսէսի Վրաստան գալը Դաւթիթ կախումն ունենար, սա իհարկէ երբէք չըպիսի թողնէր: Ինքը խանը երեւումէ որ Ներսէսին ճանաչած էր իրեւ ընդունակ մի անձը դեսպանախօս սութեան համար, իրեւ սիրելի ռուսաց աչքում, և, որ զիսաւորն է, իրեւ այն աստիճան կազուած Դանիէլի հետ, որ ուր և գնայ, դարձեալ շուպուլ պիտի վերադառնայ իւր Հայրապետին որդիաբար խնամ տանելու: Խանի այս վերջին կարծիքը, ինչպէս պիտի տեսնենք, չար զարացաւ:

Այդպէս ահա կոմիսու Հրամանատար Ցիցիանովի գեսպան իշխան Թամազ Օրբէլեանին նրեանի մէջ իւր աչքով տեսաւ, որ խանը ռուսներին հածոյանալու համար բանտից և չարչարանքից ազատեց Դանիէլին և փոքր ինչ սատնացաւ դէպի Դաւթիթը, բայց կաթողիկոսական զահը ոչ առաջնորդ և ոչ վերջնորդ տուեց, այլ իսկապէս թողնելով թափուր, զիմեց Ցիցիանովին իւր կողմից Շերիֆ փաշոյի ինդիրը ծագեցնելով: Այս առաջարկութիւնը գլուխ տանելու համար խանը գեսպաններ ուզարկեց երբեմն Պօլսոյ պատրիարք Գրիգորին և Ներսէս Շահապետին: Բերանացի աւանդութիւն կայ, որ Ներսէսը համոզում է եղել Դանիէլին նմանապէս անցնիլ դէպի ռուսաց սահմանը, որպէս զի եթէ վերոյիշեալ դեսպանախօսութիւնը ըստ յաջողէ և խանը նորից Դաւթիթ նանաչէ կաթողիկոս, այն ժամա-

նակ Դանիէլը նմանապէս իրան կաթողիկոս հրատարակէ իւր կուսափից հայերի համար և նոյն խկ հայրապետական գահը եջմիածնից գուրչ լինի: Դանիէլը, իրբւ թէ, չէ համաձայնած Ներսէսի այդ առաջարշ կութեանը և բարեւը է համարել վերադառնալ Երևանից եջմիածնին: Մեզ կասկածելի է թվում որ, եթէ մինչեւ անգամ հոգորչ չափ ցանկանար Դանիէլը Վրաստան գալ, խանը թողնէր նորան: Կարծումենք որ Ներսէսը ինքը գիտէր այդ բանի անկարելիութիւնը և այդ պատճառով այդպիսի առաջարկութիւն Դանիէլն չէր կարող անել. միւս կողմից՝ եթէ միայն Դանիէլին կարելի լինէր գալ Ռուսական և այդպիսով ազատուիլ Դաւթի և պարսից բռնօւթիւնից, այն ժամանակը Ներսէսը կըկարողանար համազէլ իւր արհւոյն այս անգամ ևս հետեւիլ իւր աշակերտին, որի տուած Խորհուրդները միշտ ընդունած էր: Իսկ ինչ որ կմիրարերի Գանիէլի կաթողիկոսական գահի առ ժամանակ եջմիածնից գուրս հաստատելու հարցին, մեր իւր տեղը յառաջ բերելիք գրութիւնները պիտի պարզին թէ երբ և ինչպէս էր յրացել սյդ միտքը Ներսէսի մտածողութեան մէջ:

Խանը, Եէրիք փաշայի մասին դեսպանութիւն ուղարկելով, ստիպեց Դանիէլին մի բարեխօսական նամակ գրել Ցիցիանովին: Ինչ պէս տեսնութենք, կաթողիկոսը ինքը զգումէ աշխարհային և տէ՛րութիւնների քաղաքական խնդիրների մէջ միջամտութիւն անելոց անյարմարութիւնը, բայց յայսկումէ որ ստիպուած է եղել այդ գրելու¹⁰⁾: Դամակի վերջը «Դանիէլ կալանաւոր եալ» ստորա-

¹⁰⁾ «Պայծառափայլ կնեազ բարձր գերազանցութեան Պաւլ Դիմիտրիչ 8իցիանով, Յիսուսի Քրիստոսի ծառայ.... և յայտ առնեմք... զի թեպէտ զամենայն վիշտ, զտառապանն մեր և զողորմելութիւն առ հասարակ բրագումար միաբանութեան մերոյ բան զայս յատուկ երկար պատմաց զրութեամբ մահուչափ երկիւղիւ մատուցաք վեհանձնութեան ձեր կանխաւ յառաջազոյն, սակայն և այժմ ի գալ ժամանել աստ գերազոյն հարազատին բարձր գերազանցութեան ձեր, քանզի խանն Երևանու ճառ նաշէ զմեղ կենսակիր նշանաւ նորին մեծութեան ամենողորմած զրամաւածիւ, և զիտէ թէ չնորհ ունիմք ի նորին Աթոռոյ ողորմութեան և ի սուրբ պատկերէղ ինքնակալ յաղթող կայսեր, վասնորոյ խնդրեաց ի մենջ միջնորդ մինիւ իննդրանաց իւրդում զոր իննդու ի բարձր գերազանցութեանէ ձեր վասն Եէրիք փաշայի ակրումն, զոր կամի հասպատել ի տեղի իւր, ուստի ընկեցեանն է յերկիրն Ախալցիայու:

և Եւ թէպէտ զիտեմք լաւապէս թէ անվայելուէ մեղ ըստ ամենայնի

գրութիւնը ցոյց է տալիս, որ դա այդ միջոցում չունէր ազատութիւն Պարսկաստանի սահմանն անցնելու: Գրութեան ոճից երևում է, որ Ներսէսի շարադրութիւնն է: Երկար ժամանակուայ վնյաջողութիւններից գրգռուած, Գաւթի ովերիմ թշնամի և Երեանի խանից վեճք պահանջող Ներսէսը ուրախ էր որ կարող է համել Ռուսաստուն, ուր քաջ կուսակիցներ ունիր Թիֆլիսի մէջ Յովհաններ Գեղարդակրին, Աժտարիսան — Եփրեմին և Պետերբուրգ — Լազգարեան եղայրյաներին:

1803 թուի յունվարի 24ին Եջմիածնից գուրս գալով ռուսաց և խանի դեսպանները հասան Թիֆլիս նոյն ամսուայ 31ին: «....իւ կեալ ժամանեցաք մեք աստ ի Թիֆլիս քաղաքս ի ՅԱՆ, յունս վարի, գրում է Ներսէսը Եփրեմին, և եկն եմուտ ի քաղաքս մեւ ծահանդէս փառօք պայծառափայլ քնեազ Պաւլ Դիմիտրիչ Ցիցիանովին ի 1 փետրուարի, օրում ընդ առաջ ելեալ նահատակ և կենդանի սուրբ Հոյրն իմ Հոյակապ Յպիշաննէս արհին (Գեղարդ գակիրն) յանդիման լինի նմա ի Դուշեթ և ողջունեալ զնա ըստ արժանաւոյն մատուցմամբ աղուհացի ընդ գրկեալ աւետարանաւ և խաչեւ լսէ զբազում բանս ախորժականս, նաև զխոստմունաշաւադոյնս զայս օրինակ՝ թէ իսկոյն ընդ մտանելս (ի Թիֆլիս) յերկրորդում աւուր առաքեցից յերեան զայր հաւատարիմ և կպտարեցից զանդառ նալի հրաման կայսերական ևայն: Ի վերայ այսորիկ հրաման խնդ-

« գրանիլ ի սոմնպիսի անվայելուց մեզ, սակայն ըստ որում մինչեւ ցայսօր ապրիմք չնորինք նորին սուրբ կայսերութեան և ողորմածութեան ձեր, և ևս ըստ որում ման և կեանք ի ձեռս սորա են այժմ ի ներկայս, սմին իրի առ ապրեցուցանելոյ զիեանս մեր և մերայնոց յօժարեցաք յանպատշաճ յայս յայս խնդիր խանին Երևանու, և որովհետև կնիք մեր հալ ե ալ և էր Դաւթիթ բռնաւոր պատրիարքն, նորին վասն պատճառ առեալ առաջ քեցի ի տեղի կնքոյ զարազատոն մեր զգրիբոր արքեպիսկոպոսն և ըզ ձկոնասաւնն մեր զներսէս վարդապետ, զի եկեալ առ բարձր գերազանցութիւն ձեր պատմիցին բերան առ բերան զոգորմելութիւն և զվիշտա անձար միաբանութեան սրբոյ Եջմիածնի, և մաղթեսցեն զողորմութիւն և նորին սուրբ կայսերութեան, զի առատածեռնել մեղ այց արասցես մեզ վասն անուան Աստուծոյ և վասն կենաց պատկերին նորին ի երկրի ողորմած սուրբ կայսերն մերոյ, քանզի մեռանիմք ահաւասիկ: Ողջ լեր և ակնարկութիւն նորին սուրբ կայսերութեան քաղցր միջի, խոնարհ Դանիէլ կալանաւոր եալ: ի 1803. ի 23 յունվարի: (Ելերկան?)»

« բեալ վերադառնայ (Գեղարդակիրն) ի քաղաքս տնօրինել աստ
և զհանդէս հոգեորականաց՝ յառաջաւորեալ նմա ի մտանել իւ.
« րում, որ և պատրաստեալ ըստ արժանոյն՝ զմեծ հանդէս հան-
« դիսացոյց կարգաւորաբար ի դուռն բերդին զարդարեալ պատուա-
« կան զգեստուք և մեծամեծ խաչեւք և վառօք. և ի մերձին նո-
« րս՝ հանդէսն յառաջ կացեալ յիշեալ հոյակապ արհին դրուատէ
« զնա պերճիմաստ բանիւք ներբողից, զոր և արձանացուցեալ
« զրովք մատուցանէ նորին բարձր գերազանցութեան. որ և առաջ-
« նովք և վերջնովք գրաւեալ զնա շնորհօք հոգեորական կացու-
« ցանէ զմեծ նախարարն բաւական շնորհակալու, որ և ինոյն երե-
« կոյի, որում հանգիստ կալնոյր ի օթեան իւր՝ իսկ և իսկ կոչեալ
« զսրբազան հայրս մեր պանծալի՛ խօսի ընդ ամա զբազում միսիւ-
« թարականս և խնդրէ ցուցանել զոք զիտակ լիզուի ոռւստաց և
« տաճկաց, զնա առաքել յնրեան և այլն: Եւ ի երկրորդումն աւուր
« տարեալ մատուցանէ նորին բարձր գերազանցութեան զգրեանս սրբա-
« զանին մերոյ (Դանիէլի) վերիւու զրութիւնս (որոց դօրինակն յղես-
« յուք սրբութեան ձերում ի սոյն աւուրս) և նա ընկալեալ զայնս
« գարձուցանէ վերսուին առ ինքն հոյակապ արհին զի թարգմանեալ
« մատուացէ, որ և ահա այսօր մատուցանէ հանդերձ թարգմանու-
« թեամբն եթէ Տէր յաջաղեսցէ և լսեմք թէ ի սոյն օրն զմարդ
« յղելոցէ յնրեան ըստ խոստմանն, բայց թէ զինչպիսի բանիւք,
« չեմք գեռ իրազգած: Ուստի մնայ յետոյ ծանուցանել զկատա-
« րեան. ողջ լեր որ ի պարձանս ծառայի և որդւոյ սրբութեանդ՝
« Ներսէ ս նուռաստարե դայի. 1803 վետրուարի 4 ի թիվ
« լիս քաղաք»:

Այս նամակի մէջ յիշած և գեղարդակրի Ցիցիանովին մատու-
ցած զրութիւններից մէկը վերեր բերած Դանիէլի նամակն էր՝ իրան
ուղարձ, միւսը շարադրած էր ներսէսը Թիֆլիսի մէջ Դրիգոր պատ-
րիարքի և իւր կողմէց և խնդրագրի ձեւ ունէր: Ամենակն մոռացման
տալրի խանի այն յանձնաբարութիւնը, որի համար ղետպանախօ-
սութեամբ եկած էին Թիֆլիս և ոչ մի անգամ չըյիշելով Շէրիֆ
փաշայի գործը, յիշեալ հոգեորականները խնդրումէին միայն, ա-
զատել կաթողիկոսին, «սուրբ աթոռը և հայ ժողովուրդին պարսից
« բռնութիւնից»:

¹¹⁾ « Պայծառափայլ կնեազ բարձր գերազանց Պաւլ Դիմիտրիչ Ցի-
« ցիանով: Ողորմած տէր, Սուրբ Յովհաննէս Ակրտիչ մինչ էր ի բանտի,

Ցիցիանովը վետրուարի 6ին (1803 թուի) ուղարկեց Երևանի
խանին դեսպաններ՝ կայսերական տան նախարարութեան պաշտօ-
« նեայ երիտասարդ գրաֆ Վորօնցովին (որ յետոյ վորխարքայ Կովկա-
սու), Զույկօ կապիտանին և դարձեալ իշխան թռմաս Օրբելեանուն:

« ըստ զրելոյ սուրբ Աւետարանին Ղուկասու (7. 13.), առաքեաց առ Յի-
« սոս զերկուս յաշակերտաց իւրոց և ասէ՝ Դու ես որ գալոցն ես թէ այ-
« լում ակնկացուք, Ըստ այսմ ի ներկայ, Նորին կայսերական առատ
« ողորմութեամբն պատրիարք Արարատեան աթոռոյն և այժմ բռնաւորու-
« թեամբ պարսից կալանաւորեալ հոգեսր տէրն մեր Դանիէլ, ի վերայ կըր-
« կնակի զրութեանց որ առ բարձր գերազանց պայծառափայլութիւն ձեր,
« բազում ջանացողութեամբ և մանաւանդ թէ յատուկ ողորմութեամբն
« Աստուծոյ հնարեցաւ առաքել առ ոտս ձերինդ պայծառափայլութեան
« զմիկ պաշտօնեայս իւր, զի որպէս առաջի պատկերի նորին կայսերա-
« կան մեծութեան՝ ձերինդ պայծառափայլութեան մեք ծանուցուք բերան
« առ բերան՝ էքս յանդիման՝ զայն ամենայն, զորս չէր հնար ի թուղթն
« իւր՝ յերկիւզէ ճանապարհորդական վտանգին:

« Արդ յօրէ անտի գտանելոյ նորա զնորհս առաջի նորին սուրբ
« կայսերութեան, միշտ ինդիր նորա յաթուոյ ողորմութեան նորին այս է
« յամենայն զրութիւնս իւր, զի ազատեցի սուրբ աթոռն Արարատու հան-
« գերձ բոլոր միաբանութեամբ և ժողովուրդովք իւրով ի հեթանոսական
« տարապանաց, սմին իրի, լսելով զնորհաբեր գալատենէ նորին իսկական
« պատկեր հզօր կուսակալիդ, առաքեաց զմեզ առ ոտս մատուցանել զնոյն
« ինդիր, Աղաչէ արդ ուրեմն Դանիէլ պատրիարքն, բազմավիշտ հոգեսր
« տէրն մեր, զի թէ հասեալ իցէ ողորմութիւն Աստուծոյն Երկնաւորի
« ինքնակալ յաղթող սուրբ կայսերութեան, ահա ժամանակ ընդունելի, ահա
« օր փրկութեան, յորում ժամանեալ են պատրիարքն և Աթոռն Արարա-
« տիան ի վերջին ծայր յետին թշուառութեան և բոլոր ազգաւ և ամենայն
« միաբանութեամբ կան ի դրտնս մահու, ուստի զի մի յանդիմեսցին ասել
« հեթանոսք՝ թէ ուր է Աստուծած քրիստոնէից: Խնդիր են Դանիէլ պատ-
« րիարքի զի մեծ արանչքի ողորմութիւն անպատմելի սուրբ կայսերու-
« թեամն, զօրացուջիք զաջ նորա և բարձր արանջիք զձեռն նորա ըստ
« սաղմոսողին (8. 8. 14) և յայց եկեալ ողորմելի պատրիարքին և Աթո-
« ռոյն Արարատեան և ժողովրդեան Հայոց, ազատեսջիք զնոսա ի բռնու-
« թեանէ Պարսից ի փառս ամենամեծին Աստուծոյ և ի պատիւ մեծութեան
« անուան ստուերի նորա, ամենազորմած տիեզերահրաման օգոստափառ
« սուրբ կայսեր մերոյ Ալեքսանդր Պաւլովիչի: Աղօթարար բարձր գերա-
« զանցութեան ձեր Գրիգոր արքեպիսկոպոս: Աղօթարար խոնարհ Ներսէս
« վարդապետ: »

Խոր նամակի մեջ դէպի խանը, Ցիցիանովը նորից առաջարկում էր անմիջապէս Դանիէլին կաթողիկոսական աթոռի վրայ բազմեցնել, վասն զի քա ռուսաց և օսմանացոց տէրութեանց ձեռքով հաստած է և թէ քերբ որ Հիւսիս և Արևելք մի այդայիսի վճիռ տուած են, զանազան սողունները չպիտի համարձակին ընդուհանալու։ Եկրիֆ փաշայի խնդրոյ մասին խօսք չկար, իսկ Ներսէսը և Գրիգոր պատրիարքը մնացին Թիֆլիսում Գեղարդակրի մօտ։ Երևանի խանը, տեսնելով որ յիշեալ վարդապետների ձեռքից խաբուցաւ, որ Ռուսաստանը իրան սպառնալց կերպով հրամայումէ, այն ինչ իւր Փոքրիկ խնդիրը Եկրիֆ-փաշայի մասին և բանի տեղ չէ դնում, գիտենալով վերջապէս որ Շահը պատրաստ է իրան օգնելու Ռուսաց դէմ, որոնց դրացիութիւնը անտանելի էր, — Ցիցիանովի գետպատճերին բացասական պատասխան տունց Դանիէլի կաթողիկոսութեան մասին և յետ ուղարկեց, որոնք ունայնաձեւն վերադարձան Թիֆլիս մարտի 7ին։ Ցիցիանովը խանի պատասխանը յանդուգն և չը տեսնուած լրբութիւն համարելով, սկսեց պատրաստիլ ճանապարհները բացուելուն պէս զօրքով Երևան դիմելու, Խանին պատժելու և Դանիէլին կաթողիկոսական դահը բազմեցնելու։ Ռուսաստանը յայտնի կերպիւ պատերազմի պատրաստութիւն էր տեսնում, իսկ խանը Դաւթից համոզուած էր, որ բոլորի պատճառը Դանիէլն և նրա օգնական Ներսէսն են։ Բայց Ներսէսը խորամանկութեամբ փախաւ և հիմայ Թիֆլիսի մեջ նստած ով է իմանում ինչ լարեր է լարում Յրեւանի խանի և Դաւթի դէմ։ պէտք է նորան մի կերպ յետ բերել Եջմիածին և պատժել ըստ օրինի։ Երեխ թէ այս գիտաւորութիւններով՝ Դաւթիթը դիմում է վերջին հնարքի, այն է ստիպում է Ներսէսի բարեկամ՝ Իւթէսու վարդապետին զրել նրան մտերմաբար, որ շուտով գայ Եջմիածին հիւանդ ծերունի Դանիէլին աշբութիւն անելու և ձեռք վեր առնէ այն ուշնայն աշխատանքից յօդուա Դանիէլի, որ բացի մասար ոչինչ օգուա չէ բերում ոչ պիտի Իւթէսու, երեխ լաւ գիտենալով որ Ներսէսը այդ բանից չի խարուիլ, ստիպուած դրում է յիշեալ մարդով մի նամակ մարտի 23ին (1803 թ.)։ Բնագրի վրայ Ներսէսը իւր ձեռքով գրէ ուստ հրամանի Դանիէլու վարդապետն զրէ ըստ հրամանի Դաւթի զի գնացից առ ինքեան, ⁽²⁾։ Այս նամակը, որ միանգամայն Դաւթին

⁽²⁾ Ահա Ութէսու նամակը։ «Սիրելի եղբօր իմոյ տեառն Ներսէսի գերզոն և վարդապետի մատուցի ողջոյն հանդերձ խորհրդական յայտարարութեամբ։

պէտք էր վերաբերել, լաւապէս ցոյց է տալիս, թէ որքան մեծ նշանակութիւն էին տալիս Ներսէսին նոյն իւր թշնամիքը։ Թէ ինչ պատասխանեց այս գրութեանը Ներսէսը — մեզ յայտնի չէ։ Գիտենք միայն, որ Թիֆլիս նստած՝ նա Գեղարդակրի, Գրիգոր պարհարքի և իւր կողմից գրած նաև իներով ամբողջ աշխարհը լորեց։ Հնդակաստանից մինչև Աւստրիայ ամէն տեղ Ներսէսի գրութիւններից հայոց փրառ տուրքում էր Դանիէլի թշուառութիւններն ու Դաւթի բռնութիւնները լսելով։

« Յայտնի է քեզ թէ որչափ և աշխատեցար ընդունայն եղեւ և յամենայնէ Վրիպեալ գտանեցար։ Ո՞հ, զինչ է այդ, զինչ օգուտ թէ աշխարհ ամեն և նայն շահեսցի և զանձնող քո տուժեցիս, մանաւանդ թէ ոչ թէ աշ- և կարհս շահի այլ չարաչար կործանի և զանձն քո ընդ նմին տուժի, Զի « յայտնի է քեզ որ թէ իյանդորբութեան մնայիր յաւելուկիր ի կեանս քո։ Ապա զի է զի կենամաշ մինիս և աստ և անդ թափառական շրջիս և շա- և հիս և ոչինչ։ Արդ ահա ծերունին, այն հայր քո (Դանիէլ), որ քե կամէր « ի հանգստութեան լինիլ, ի դառն կեանս գրով ի տան բանտի զնի։ Վասնորոյ եղբայրաբար և ցաւակցաբար զրեմ մտերիմ խորհրդակցու- թեամբ, զի բաւական է զոր ինչ ունայնաբար աշխատեցար և մստի է « զոր աշխատելոցիս ի յունայն կենցաղս և ոչինչ է զոր ինչ յուսացեան ես « որպէս բազմիցս առեր զիորձ, խնդրեմ այսուհետեւ գաղարիլ և գտանել « հանգիստ և զիառս արժանավայելս, և այս այսու գործակցութեամբ եթէ « ջանացես քոյով անձամբ շիզուցանել զկայծն բորբոքեալ ի քաղաքիդ « և յիշատակեալ զանուն տեառն մերոյ վեհիս (Դաւթի) ի յեկեղեցիս ա- և մենայն և յետ այնը խաղաղացուցանել զգողովուրդդ և այնուհետև սրտի « մտօք ի յուղղութիւն դառնալ և կամաւ և խորհրդեամբ ձերդ առ- և նել զայդ համար խաղաղութեան, յայնժամ կամ գալ անձամբ յաթոռս « և կամ ընդ այլ հարցն մնալ այդու և մասսէրէթ թղթով ծանուցանել « զառնելն ձեր և լիշատակելն յայնժամ մեծ բարութեան հասանիս և մեք « վկայեմք և լինեմք միջնորդ որ զինչ և խնդրիցէք անյապաղ սրբազն « տէրս կատարէ, Այլ այժմ զինչ օգուտ է քեզ, որ ծերունիս ի նեղու- թեան գոլով և դու ի բազում հոգս և ի տառապանս ։ Քեզ այն էր փառք, « որ ի սորին հանգստութեան դու խաղաղ կենօք օրհնաժառանգ որդի « երեւէիր յաջ նորին, այն էր քեզ փառք և պատիւ, և ոչ այս որ երեսի « ի միջի պատճառ խուզվութեան, զի թէ ումանք առ այժմ հաւանիցին ընդ « գործ քո, բայց յետոյ անգուննեն և յապայն ամենիքեան իսկ, որք լսեն և տեսանեն։ Լաւ մտածեաւ և հաւանիս ասացելոցս և եկ ի զգաստու- թիւն, Լաւ մտածեաւ և ընդ Յովհաննէս արհուցն (Գեղարդակրի) խոր- « հեաց թէ ուստի սկսայք և մոր գաղարեաց ուրեմն լաւ է որ հնարեսցես

առաջ մասն մասն այսու չ ըստ սկզբանի, անդեպաղման ոչ գումար
ու այս առաջնային դաշտ սկզբանի այսու ով այս առաջնային
ՆԵՐՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄ

Կովկասի հրամանատար իշխան Ցիցիանովը, միտք ունենալով
ռուսաց սահմանը մինչեւ Արաքսը և կասպից ծովը հասցնել, Երևա-
նի խանի ընդդիմութիւնը դանիէլի մասին բարեկատեհ՝ առիթ էր
համարում արշաւելու դէպի Երևան և Նախիջևան, բայց զօրքի սա-
կաւութեան պատճառով քանի մի ժամանակ այդ յետաձգելով,
պատրաստուեցաւ նախ Գանձուկի և նուշայի վրայ արշաւելու և յետոյ
« խաղոթիւն և զեւս երթիցես նմին և լիցիս որդի խաղաղութեան»: Եւ
« ձեր փոյթ լիցի յանուն տեսան մերոյ վեհին (Դաւթի) յամենայն եկե-
« ղեցիս, և զյիշման լուրն կամ դու բերցես և կամ յղենջիք և մնասալիք
« այդր. յանժամ զինչ և կամք իցէ ձեր Աստուծով ընդ այնմ կատարումն
« լինի թարց երկբայութեան կարծեաց, Եւ թէ դիմակայեցես թէ դու
« ով ես, որ զայդ խօսիս և խոստանաս կատարել, հաւատա ինձ որ ես
« թերի ինչ չխօսիմ և հաւատացուցանեմ որ ոյս ի միջի մերում ոք որ կա-
« րող է առնել զայդ թարց կարծեաց, և յայսմ փորձ յայնժամ լինի, եթէ
« առնեցէք կատարումն բանիցս դորս գրեցաք և մեք յայնժամ այնպէս
« տնօրինեցուք զիամս ձեր և հանգուսուք զմիտս ձեր, որ կամ ինքնին
« զիմեալ ամենայն յօժարութեամբ գայքաստ և կամ թէ հաճիք այլ ուր
« վիճակաւորիլ: Եւ խսկապէս հաւատա, որ սրբազն վեհըն (Դաւթ)
« և անձարացեալ է թէպէտ, բայց զիտէք հաւատեաւ, որ թէն հրաժա-
« րիցի: Հտան թոյլ ի կամս իւր և անհնար է. ասրա զուր է զոր ջանայքդ
« և ինքն յօժարէ մեծ փառս ընծայել այնմ որ հնարիցէ զիսաղաղութիւն
« առնել, և թէ դու լիցիս միջնորդ և արձան բարի յաւիտենական, և միջ-
« նորդ խաղաղութեան և նշան սիրոյ և կապակցութեան երկուց տարորչ
« ծայրից, լիցիս այժմ և յապայն յաւիտենական փառաց արժանաւոր:
« Վերջապէս եթէ զանց առնիցես և յայլմէ եթէ բուռն արկանիցէք՝
« զիտասցես, որ զինի աւորց զտանիցես զեերունի հայր քո մեռեալ և
« մեասցես յաւիտեան պարտական նորին, և մեք խսեմք ի քէն զկապ եղ-
« բայրութեան և համարիմք հայրասպան, որ վասն անցաւորիս փառաց և
« սատանայական նախանձու այնքան վրդովման առիթ զտանիս, այս
« մեր պայման և զիր միակամութեան եթէ լուիցես՝ իսկ թէ ոչ՝
« տարորչն լիցի բաժանման մերոյ, զի թէ աջ քո ասէ զայթակղեցու-
« ցանէ՝ հրամայէ հատանել և ի բաց խլել, որով և զայլս իմաստափեսս
« ցես. և լեր ողջ ի սէր իմ, որ եմ միաբան սրբոյ Էջմիածնի Ութէոս
« և եակիր: 1803. մարտի 23, ի սուրբ Էջմիածնա:

դառնալ դէպի Երևան: Յովհաննէս Գեղարդակիրը և Ներսէս վար-
դապետը չէին դադարում Դանիէլի և Էջմիածնեցոց թշուառու-
թիւնները Ցիցիանովին հաղորդելուց և ամբողջ աշխարհում հոչա-
կելուց: Մայիսի սկզբներին Երևանի խանը զեսպան ուղարկեց Ցի-
ցիանովին խոստանալով Դանիէլին կաթողիկոսացնել և իրրւ թէ
մեղայ գալով իւր առաջուայ յամառութեան մասին, բայց այս
խոստանունքը միայն խօսքեր էին, վասնորոյ ոչնչ ընդունելութիւն
չգտան: Հետեանքը միայն այն եղաւ, որ Դաւթիթը, խանի վրայ վստա-
հացած, 1803 թուի մայիսի 25ին համարձակուեցաւ ծերունի Դաւ-
թիէլի մօրու սր գերծել տալ ասելով « Եթէ տակաւին ի Ռուսսէ ա-
« պաւինութիւնդ՝ առ որս անկան քո չարագե արբանեակք (Ներ-
սէս և այլք), ձայն առուր ու բեմն գօրաց նոցա, փութալ յօգնու-
« թիւն քեզ ի չարիսդ՝ որ արդ իսկ իրաւամբ ի զլուխ քո հասաւ
« նիցենս: Կարծումնենք թէ այս անցքը, որ ըստ խնքեան մեծ ան-
պատվութիւն էր Էջմիածնի հոգեկորականութեան և ամբողջ հայ
ազգին, խոր խոցած պիտի լինի Դանիէլի կուսակցութեան սիրտը և
Ներսիսին մասնաւորակէս, որովհետեւ վերջնիս մօտ հինգ տա-
րուանից յետոյ նոյն ձեռով և նոյն զէնքով շտապեց Դաւթից վըեժն
առնելու:

Դեռ ևս հոկտեմբերին (1803 թ.) Ներսէսը թիֆլիս էր գտան-
վում: Այդ ամսին նա Բոյակէթից նամակ¹³⁾ ստացաւ, որ իմաց էր
անում իրան թէ քաղաքի աւր փաշան մեռելէ և տեղը մի նոր
բռնաւոր է նստել. վասնորոյ այն անձինք, որոնց Ներսէսը յանձնել
էր պահպանելու Էջմիածնապատկան կայքը այլ և կարող չեն երաշ-
խաւոր լինել սորա ամբողջութեանը և խնդրում են վարդա-
պետի կարգադրութիւնը: Պէտք է կարծել, որ բուռն նամակը իւր
թարգմանութեամբ Ներսէսը շտապելէ ներկայացնել իշխան Ցիցիա-
նովին, իրեւ նոր ապացոյց թէ որքան շուտ է հարկաւոր օգնու-
թեան համան Էջմիածնին: Մէր այս կարծիքը հիմնուած է նորա
վրայ, որ յիշեալ նամակի բուռն օրինակը գտնվումէ Կովկասի փո-
խարքայի զիւանական պահարանում:

Խշան Ցիցիանովը պատրաստուեցաւ վերջապէս զնալու գանձակի
վրայ, որի յաղթելուց յետոյ միտք ունէր Շամշադիլի վրայ անցնել

¹³⁾ Акты Кавказ. Археогр. Комиссии т. II стр. 462.

և հասնել երեան։ 1803 թուի Նոյեմբերի 22ին ռուսական զօրքերը նոյն իսկ Ցիցիանովի հրամանատարութեամբ Թիֆլիսից ճանապարհ ելան։ 29ին արդէն Շամքօր էին հասած, իսկ դեկտեմբերի 2ին գանձակի այգիներում ամրացան։ Այս բանակի մէջ իշխան Ցիցիանովի հետ էին Յովհաննէս Եպիսկոպոս Գեղարդակիրը և Ներսէս վարդապետը, որոնք 1804 թուի յունվարին գանձակից Եփրեմ եպիսկոպոսին և Սինաս աղայ Լազարեանին գրած նամակում պատմումն յիշեալ քաղաքի առնիլը¹⁴⁾։ Դեռ ևս, երբ ռուսները քա-

¹⁴⁾ Ահա նամակը՝ «Սրբազն հայր Եփրեմ արքեպիսկոպոս և վեհապետայ իշխան...» Աղայ Մինաս, Զգրեալն մեր.... որ ի 31-ն ամսոյս «Ընդլուսածագն առաւտուն դէմ եղեալ յանդիման ամրոցին Ճաւատայ « (Ճաւաթ խան գանձակի) և զօրութեան նորա քաջացան հզօրեղապէս և « գրոհ տուեալ քան զալիս ծովու առաւել սաստկապէս չև ևս ի չափ միշոցի կէս ժամու կանդնեցին զանդուզ մեծամեծու ընդ պարիսպ անմատչելի կարծեալ դղեկին և լցեալ ի ներքս ի դղեակն՝ սուր եղեալ կոտորեցին զթչսամիս հաւատոյ և զհակառակորդս պաշտպանին հաւատոյ « յաղթող ինքնակալին ամենայն ռուսաց աւելի քան գ1300 ընդ այր և « Ընդ կին Այլ մեծութիւն անուանն Քրիստոսի և պատիւ ամենազորմած քաղցր ակնարկութեան նորա, որ ապրեցոյց զքրիստոնեայ զաղցր « մեր սքամչելու իմն եղանակաւ, որ ի բազմութեան անդ կոտորածի անկեալեն ի մերազանց միայն երկու արք և երկու կամ երեք կանայք. « իսկ այլքն ամենեքեան ապրեալք ողջութեամբ և առողջութեամբ, և « հանդերձ այնու ամենայնիւ գտեալ զողորմութիւն յաչս պայծառ կուտակալին և ամենայն զօրացն ռուսաց ըստ մեծի մասին մնացին անկապուտ ի զիեստոց իւրեանց զոր ունէլին զգեցնեալք. շատք ևս խառն « ընդ զօրս մտեալ ի բերդն առին և զանկողինս և ինչ ինչ ի ծածկութից և ի սփռոցաց, յորոց ամէնից զրկեալն են ի յրտութիւն եղանակին ամենայն ապրեալքն ի տաճկաց. Գրեալ եմք յառաջին զիրս (սորա օրինակը չունենք) մեր թէ անկաւ ընդ Ճաւատ անօրինին և մեծ որդին նորա ի խռանն անդ, այլ յետոյ լուր եղն թէ այն սատակ համբաւալ մեծ որդի նորա կապտեալ ընդ մերկեալ հառարակութեանն եւ « լնալ է արտաքս խառնութեանէ այլոցն ապրելոց և փախուցեալ ընդ միւտ այլ եղբօրն իւրում դէպի Սամուղ, որ է մի ի նահանգաց Գանձակու « ընդ իշխանութեամբ իշխողին գանձակու՝ կզզի ի մէջ կոր զետոյ, ի չափ 7 ժամու ճանապարհի տարակացութեամբ. բայց մի եղբայր նոցա « եթէ մեռեալ իցէ և թէ փախուցեալ, ոչ եղն յայտնի մինչև յայժմ. իսկ պիղծ հօր նորա ծածկել ետ զսատակն՝ պայծառ կուսակալն ձեռամբ ապրեալ մօլլայից ըստ օրինի անօրէնութեան իւրեանց և այլոցն ամենից

դաքի այգիների մէջ մանելով (պատրաստվումէին) ամրոցը ռմբակուծելու, մօտ 300 տուն գանձակեցի հայ շատապեցին ռուսական բանակը և հպատակութիւն ընդունեցին։ Դոքա անմիջապէս յանձնուեցան գեղարդակրի և Ներսէսի խնամատարութեանը և ի հարիէ միմիայն յիշեալ վարչապետների անունն ու շնորհըն էր, որ հայերը ամէն կողմից վազում գալիս էին ռուսական բանակը և զօրքերին աւմէն կերպ օգնութիւն էին ցոյց տալիս։ Այնուհետեւ վերոյիշեալ ծանօթութեանս մէջ տպած նամակից երևումէ, որ գանձակի բերդը

« այս 5 օրէ զի բազում սայլիւք բերեն արտաքս ի ամրոցէ անամի և դիզեալ և կուտեն ի հրապարակի դաշտին՝ ուստի առցեն որք կամցիցնն ապրեալ « տեարք իւրաքանչիւրոցն. Մեծ կին նորա (Ճաւաթ խանի), որ է քոյր « Նովիտ Մահմատ Հասան խանին անդէն ի տան իւրում կապեալ ի զօրացն մտելոց. ի ներքս, յետոյ ուրեմն մտախոհ եղնալ առ ապրեցուցա « նելոյ զանձն երթայ անկանի առ զուստր վարպետ Եսաէյի արուեստա « պետի դրամահատութեան Հերակլին, որ էլ հարսացեալ որդւոյ մելիք Մեծ « շումի, կարծեալ թէ իցն ոմանք ի նորոյաց ընդ զօրացն յաղթողաց որք « ապրեցուցեն և զինքն ընդ նմա. իրաւի ապրեցոյց վինքն այս խանա « կանութիւն նորա, զի որդին Եսաէյին եկեալ ընդ Համբերդովին, ըստ « որում ունին զիվաղեմ՝ լաւ ծանօթութիւն, իսկոյն ընդ բանի դրան « մտեալ ի ներքս Ռուստաց նշանով գտանէ զքոյր իւր և առ նմա զյիշեալ « կինն խանի, զորս հանեալ հրաման պայծառ կուսակալին պահէ ի տան « քեռն իւրոյ մինչև յայմօր, և երէկ եկն ի տեսութիւն նորա պայծառ « կուտական և միխթարեալ զնա բարւոք յուսադրութեամբ, հրամայեաց « ժողովել առ ինքն և զամնայն ապրեալսն ի կանանց և ի մանկանց խան « նին, և որդւոց նորա և կցոյց նոցա զընակութիւն ի գեղջ յայսմիկ զի « բնակիթոցի աստ մինչև եկեսցէ վասն նոցա կայսերական հրամանն Բայց « աստ պատմեսցուք զմեր սիրեցեալն, զի ի 4 ամսոյս, որ էր օր երկրորդ « առաման բերդին, կատարեցին մեծաւ. հանդիսիւ զտօն յաղթութեան « Գրիստոսապակ ինքնակալին, ուր է աք ներկայացեալ և մեք. Յետ « կապարմանն տանին ժողովեցան ամենայն մեծ և փոքր զօրապետք ի « ճաշել առ կուսակալն. կրչեցաք և մեք յայն սեղան թէպէտ և ոչ ի ճաշ, « ըստ որում պահէ էր մեր օրն այն. բայց իրաւի զուարթացոյց զիբրտ « մեր օրնեալ կուսակալն առաւել քան համադամ իւղալիր ախորժածաշակ « կերեաւ, զի մինչ եհաս ժամանակ և արբին զբաժակ յանուն կենաց « ամենողորմած ինքնակալին, յետ նորա ընկայեալ ի ձեռն իւր « զբաժակն, ճայնեաց առ բազմութիւնն ամենայն երեկը զերգս հոգեորա « կանս և յաւարտ երգոյն առէ բարձրածայն՝ արբցուք և յաղագս կենաց « Դանիէլ պատրիարքին հայոց զբաժակ ուրախութեան առ անծառ

առնելուց յետոյ (յունվարի 4ին 1804 թ.), 8իցիանովը դարձաւ Թիֆլիս, իսկ Գեղարդակիրին և Ներսէսին առ ժամանակ թողեց Գանձակի հայ հասարակութեան դրութիւնը ապահովացնելու և առ հասարակ խնամք տանելու համար։ Թէ երբ վերադարձաւ Ներսէսը Թիֆլիս՝ մեզ յայտնի չէ, բայց զիտեմք միայն որ 1804 թուի մարտի 19ին նա արգէն Թիֆլիս էր, որտեղից շարունակումէր իւր նամակագրութիւնները։¹⁴⁾

Իշխան 8իցիանովը թէ և միտք ունէր առանց Թիֆլիս վերա-

« նօթք բազմականք ի տարակուսի եղեալ թէ ով արդեօք իցէ այն, յետոյ իրեն ծանեան ի միմեանց ամնենքին միաձայնութեամբ կոչեցին բարձրա- բարբառ ուռամյ, ուռամյ եօթնիցն և ութնիցն իրկին կրկին, և ի վախ- ճանի ասէ ի լուր ամնենցուն բարձր բարբառով՝ եթէ արեամբ և եթէ առանց արեան նստեցուցանել պարտեմք յաթոռ իւրում զԴանիէլ պատ- րիաքն ի լինիլ մեր ողջ ողորմութեամբ Աստուծոյ։

Այսօր ահա սկիզբն արարին զօրքն դառնալ յետո ի Թիֆլիս, ինքն (Յի- ցիանով) ևս գնալոց է յետ երկուց աւուրց, բայց ի մենջ ինդրեաց մնալ աստ առ ժամանակ մի յաղագս կարդաւորելոյ զմեր ազգիս. մեք ևս յանձն առաք մնալ յամօրեայ ժամանակս և ասւա դարձուք և մեք ի Թիֆլիս, զրեալ ևմք Մինասին (մեռնաքեր Մինաս եպիսկոպոսին ?) որ զայ, և տեսցուք թէ զիարդ առնել ունիցիմք. ի հարկէ յայնժամ ևս ծանուցանեմք զկատարեալն, Երէկ ևկեալ մի պօմպօկովմիկ հանդերձ երդմազրովն, ժողովնեցաք զամնայն հասարակութիւնն ազգի մերոյ յետ օրհնութեան ջրոյն (Ձրօրհնեաց ?) և ի մէջ ևկեղեցւոյն ընթերցեալ զայն ի լուր ամնենցուն, երդմնեցուցաք զամնեսին և ետուք ստորագրել զգին, զի կայցեն մնացեն յայսմ հետէ հաւատարիմ ժողովուրդք կայսեր. Խոնարհ ծառայ Յովհաննէս արքեպիսկոպոս, առաջնորդ Թիֆլիսու և գանձակու Հայոց, Խոնարհ Ներսէս արեղայ: Գանձակ. յունվար. 1804։

Այս նամակի պատճէնից արտագրողը աւելացրած է «Այս զիր է ձե- ռազիր Ներսէս արքեպիսկոպոսի և ստորագրութեամբ երկուցն, բայց չունէր զամսաթիւ, մինչ ի վերայ զրեալ էր ձեռամք Եփրեմի կաթողի- կոսի՝ ստացայ 1804 մարտի 15 ի Ա. Պետերբուրգ։ Կարծելու է որ նամակը գրած է յունվարի 7ին։

¹⁵⁾ Ներսէսի նամակը Մանուէլ վարդապետ Ալթունեանին. «Զուտ և անկեղծ, պարզ և սիրելի և յարգոյ Մանուէլ վարդապետ, ի 18 զեկ- տեմբերի անցեալ ամին ընդ մեր սիրեցեալ տիրացու Ահանկին զրեալդ... յաղագս մայեօր Ղարասիմին (?) զրեալսդ յոյժ չերմեռանդութեամբ ու- նիմք կատարել ողորմութեամբ Աստուծոյ, այլ սակայն մեծ տարակու- սութիւն եղել մեզ բարձր աստիճանագրութիւնքն մեծագործութեանց,

դառնալու գանձակից ուղղակի դնալ նրեանի վրայ, բայց Մինգրե- լիայի հպատակութեան խնդիրը և վեզիների կատաղի յարձակմուն- քները ուռւսաց վրայ—ստիպեցին նորան քանի մի ամիս հետաձգել իւր դիտաւորութիւնները Հայաստանի գաւառների մասնիւ Բացի այդ՝ մինչեւ ապրիլի կէոր ուռւսաց զօրքին անկարելի էր անցնիլ և հաս- նիլ Երեան այն ժամանակուայ վատ և ձիւնով ծածկուած ծանա- պարհներով։ Գործի այս տարտամ ընթացքը կրակու Ներսէսին վերին աստիճանի անհանգիստ էր անում և սա իւր այդ զրութիւնը կիսակինդանս էր անուանում իւր նամակներում։

Ե.

ՆԵՐՍԷՍԻ ԶԱՆՔԸ ՀԱՅՐԵՆԵԱՑ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ։

Դեռ ևս 1803 թուի վերջերին իշխան 8իցիանովը տեղեկացաւ, որ պարսից Բաբա Խանը (որ յետոյ Ֆաթ-Ալի-Շահ անունով թա-

և նշանակք, զորոց զհետս նշուղիւք անդամ նշմարել անբաւական գտանին և միոք մեր, Բայց միայն քանզի առածէ հասարակաց հայոցն Հայաստանի և թէ ոյօձէ հարեալն երկնչի ի չալ չաթուէ՝ այսինքն առասանէ, մեք ևս և դժուարաւ կարողանամք մատուցանել միւս անդամ զհաւատս մեծա- ռ բնութեանց ուրուք, նա մանաւանդ՝ զի սոյն այս սիրելիս ինքն է որ է որպէս մտերմական խորհրդատուութեամբ միշտ յուսացուցանէր զարբա- ռ զան՝ Յովհաննէս առաջնորդն, թէ բացարձակ հրաման ունիմք կայսերա- կան, որ ի յամառիլ խանին Երեանու հաղար արամբք զնացեալ յան- և կարծակի յափշտակերոյ եմք յաթուոյ անտի զ գ ա հ ա գ ճ ի կ ն Պաւիթ, և ըստ որոյ և մեք միամիտ եղեալ ի բաց կացաք ի զդուշաւոր խորհրդոց և մերոց, որով և ոչ բազում ժամանակաց զինի պատահեցաւ մեզ երկիւղն և յորմէ կասկածէաք և կալաւ զմեղ վլանդն՝ յորմէ միշտ իսիթպայք: Ալրդ և եղբայր՝ ըստ քոյդ իննդրոյ ահա եղիցի քեզ բաւական տեղի հանելոյ զի- և մաստ կատարեալ դատողութեան, բանք նորին սիրեցելոյ զորս իբրև և հիմն հաստարմատ ամնայն խարդախութեանց կամ որպէս վարագոյր և ծածկող ամնայն անուղղայ ներգործութեանց յայդուստ կառուցանէ՝ և թէ մերձաւորութիւն իմ առ հակասակորդս մի վիշի առիթ գայթակու- թեան: Լուր եղբայր, առ ինչ արդեօք պարտաւորիցի նա առնել զայն- և պիսի անուանեան փուլի թիք այ ընդ հակառակորդս մեր, ոչ վեհու և նոքա, ոչ կառավարիչքն են իմիք զործոց, ոչ վաճառականք որպիսի և իցէ իրաց ուտելեաց կամ զգենեաց և ոչ այլ ինչ, և զինչ իցէ արդեօք և որ պարտաւորիցէ զնա առ այն: Ապաքէն մարդասիրելն միայն հարկաւոր և և յոյն առ ի նմանէ մնութիւն մնութեաց: Մեք ըստ ձերդ զրեալոյ հետեւ-

գաւորեց) գժտութեամբ նայելով ոռւսաց Վրաստանի մէջ հաստատուելու վրայ, զօրքէ ժողովում հաւրէժ, ի հարկէ չար դիտաւորութեամբ: Գանձակի նուածուելու ըստը աւելի ևս շտապացրեց պարսիկներին վերջ տալ ոռւսական յառաջադիմութեամբ Կովկասի երկրում: Ցիցիանովը այս բոլորն իմանալով իւր կողմից Երևանի վրայ արշաւելու պատրաստութիւն էր տեսնում: Ընդ ամէնը այս պատերազմի մէջ ոռւսները կարող էին գործ գնել մօտ 4,560 հոգի և 12 թնդանօթ, այն ինչ սոցա հետ մարտնչող պարսից զօրքի քառակութիւնը հասնումէր 40,000 հոգւոյ: Այնու ամենայնիւ Երևանի խանը աշխատում էր ցոյց տալ իրան պատրաստ ոռւսաց պաշտպանութեան տակ մանելու և այս մոքով անդադար գեսպաններ էր ուղարկում Ցիցիանովին. վերջինս վճարկան կերպիւ պահանջումէր,

« լոց եմք ամենայն ուշադրութեամբ որչափ և զօրեսցէ կարողութիւն մեր, և եթէ եղիցի և գտցուք ի նմա զմաներորդ ի հաղարաւորաց յուսացելոց ձեզ, զղացեալ ընդ գժուարահաւան լինիս մեր, հանդերձ մեղայիւ, մատուցանեմք զկատարեալ չսորհակալութիւնս յաղագս հաստատուն պահելոյ ձեր զայնպիսի գործունեայ բարեկամ, ապա թէ ոչ, ոչ մեղադրեմք զգեղի, քանզի բանիցն միայն էք ականջալուր և հետացն և ծաղու երեսացնորա անփորձ. միայն խնդրեմք զի առանց մեծ մեղադրութեամ ոչ վաղվաղակի անգունեալ զմանս մեր զայսոսիկ, համբերեսջիք ըստ խոստացն ի փորձոյ վկայեալ կատարածին, և այնպէս ապա գտջիք զմեզ ըստ արժանի կամաց ձերոց ջերմեռանդ սիրակից յարգութեան ձերում՝ նուաստախոհ սիրասէր փոքր աբեղայ Ներսէս, 1804, մարտի 13. ի թիֆլիս:

Մի այլ նամակ դարձեալ Մանուէլ վարդապետին.

« կարծեմ թէ ի 25 ապրիլի գրեալ իցեմ միւս ևս զիք առ սիրեցեալդ, որով յայտնի լինիցի մեր առողջութիւնն կիսակենդան: Իսկ այժմ ևս վերստին զնոյն նշանակելով, յաւելում յայտնել յարգելոյդ, նախ որ մեր որբազանն (Պանիէլ) առողջ է անդէն ի բանտի իւրում մինչև ցայսօր ժամանակ, երկրորդ՝ որ ի խանէն Երևանու անմիջաբար զան և զնան էրեշտակութիւնք պարակականք, որպէս թէ կամին մտանել ընդ հզօր իշխանութեամբ նորին կայսերական մեծութեան, բայց այսու ամենայնիւ պայծառ կուտական վերստին կազմ պատրաստութեամբ պատրաստի ելանել պատակամ ըստ կայսերական բարձր հրամանին ի սմին իսկ ամեն՝ զոր Ցէր յաջողեսցէ Երրորդ՝ որ Գէսրդ վարդապետի բեռխնին^(*) յորում է աւանդույն, վասնորոյ գրեն, տակաւին ըմբռնեալ պահէ փաշայն Պայտէտոյ Խոնարհ աբեղայ Ներսէս, 1804 մայիսի 11- թիֆլիս:

որ Դանիէլը կաթողիկոսական գահը բարձրանայ, իսկ Դաւիթը յանձնուի ոռւսաց, վասն զի կայսրի կամբն է որ սա հեռանայ էջմիածնից Ռուսաստոն, ուր թագաւորի անունով խոստացվումէ նուրան կատարեալ ապահովութիւն և օրինաւոր ոռծիկ մինչի մահը անխեղջ ապրելու համար: Մինչև այս չկատարուի հաշտութեան պայմանների վրայ խօսել անկարելի է, գրումէր Ցիցիանովը: Մամադ-խանը, նախազգալով՝ որ գործը լաւ վախճան չի կարող ունենալ, ամբացնումէր Երևանը և բոլոր բնակիչներին իւրեանց պաշարով ժողովում բերդի մէջ: Ամէն գերդաստանից նա մի ամանաթ (պատանդ) էր վեր առնում, նմանապէս ժողովումէր բերդում իւր հպատակ քիւստոնից—հայոց կանանցը և որդւոցը, որպէս զի նոցա տղամարդիկը ոռւսաց կողմը չանցնեն: Դանիէլին և Դաւթին բերել տուեց Երևան և բանտարկեց: Զը նայելով խանի գործ դրած այս միջոցներին, Երևանի գաւառի հայք պատրաստվումէին ոռւսաց կողմը անցնելու, երբ միայն սոցա զօրքերը մօտենան: Առ հասարակ թէ Վրաստանի և թէ խանների հպատակ հայերը շատ համակրում էին այս պատերազմին, երեսի գեղարդակրի և Ներսէսի զրդմամբ: Ցիցիանովը օգուտ քաղելով այդ համակրութիւնից՝ հրամայեց գանձակի, Ղաղախի, Շամշադինի և Լոռուայ հայերից քանի մի գունդ զօրք ժողովել: Վրաստան տեղափոխուած հայ մելքները նմանապէս իւրեանց ժողովուրդից առանձին գունդեր կազմեցին. հայ և վրացի զօրաց թիւը երեք չորս հազարի էր հասնում: Յունիսի 4ին (1804 թ.) ոռւսական բանակը նաև բարեկը, քանի մի մասը բաժանուած, առաջ խաղաց դէպի Երևանայ խանի սահմանները: Ոռւսաց առաջապահ գունդի մէջ, որ ժէներալ Լէօնտիէվի հրամանատարութեամբ էր՝ գտնվում էին գեղարդակրը և Ներսէսը, հետո ունենալով մօտ 100 զինաւորուած կարիչ հայերի գունդը: Հազիւ թէ անցան Վրաստանի սահմանը, ահա եօթը հազար հայ գերդաստուն Երևանի խանից վիխած հասան ոռւսաց բանակը օգնութիւն խնդրելով: Գեղարդակրը սոցա ուղարկեց Լոռուայ կողմերը^(*): Յունիսի 19ին ոռւսաց զօրքերը մօտեցան Էջմիածնին և հեռուից լսեցին զանգակների ձայնը: Ցիցիանովը կարծումէր որ այդ վանքի միաբանութիւնն է պատրաստվում խաչով և աւետարանով իրան զիմաւորելու: Շուտով իմացուեցաւ,

^(*) Տես «Լոռունկ Հայոց աշխարհ» 1863. Ցիցատակարան Յովհաննու Ոսկելչեան:

որ 20,000 պարսից զօրք Արբաս-Միրզայի հրամանատարութեամբ լցուել, բռնելէ բոլոր տարածութիւնը Էջմիածնի և Ա. Հռիփսիմելի և Գայանէի վանքերի մէջ տեղը: Զանգակը ածելէին տալիս պարսիկները ոռուսաց խարելու համար: Յունիսի 20ին, սրբոց Հռիփսիմեանց տօնի օրը, պատերազմը սկսուեցաւ և վերջացաւ պարսից փախչելովը: Այդ օրը սպանուեցան Յակոբ վարդապետ Պոլսեցի վարժապետ առուանեալ և Տրդատ Աժտարիսանցի սարկաւազը ու Քանի մի ուրիշ անձինք, որնք վանքի պատճեցից նայումէին պատերազմին: Էջմիածնայ վանքը այնուամենայնիւ մնաց տակաւին պարսից զօրքի ձեռքին: Յունիսի 25ին ոռուսական զօրքը դիմեց գէպի Երևան և հասնելով Քանաքեռ գիւղին հանգիստ առաւ: Յունիսի 27ին Էջմիածնի միաբանութիւնը մի վարդապետի ձեռքով հաղորդեց Ցիցիանովին, թէ պարսիկները վանքից գնացին, մէջը մեծ պաշար թողնելով: Խակոյն ոռուսական մի գունդ շտապեց, մտաւ Էջմիածնի վանքը առանց մնասի: Յունիսի 30ից սկսուեցաւ Երևանի պաշարումը: Խանը նեղ դրութեան մէջ լինելով դարձաւ Դանիէլը միջնորդութեանը, որ բերդից մարդիկ էր ուղարկում Ցիցիանովին բարեխօսելու մտքով. Վերջինս դարձեալ պնդումէր, որ Գաւիթը և Դանիէլը իրան յանձնուին, ապա թէ ոչ ոչ մի պայման չի լնդունի:

Հարկ չկայ մեզ պատմել մանրամասնաբար թէ քանի անդամ պարսիկները և ռուսները պատերազմեցին Երևանի բերդի առաջ: Բաւական է ասել, որ պաշարումը շարունակուեց մինչև սեպտեմբերի 3-ն (1804), երբ ռուսները զօրուելով բոլորովին պաշարեղէնից ստիպուած էին առ Ժամանակ յետ ձգել Երևանի նուածիլը և վերադան Վրաստան: ¹⁷⁾ Հացի պահասութիւնը ոռուսական այս բա-

¹⁷⁾ Այս մասին Ներսէսը 1804 թուի նոյեմբերի 17ին զրում է Թիֆլիսից Ալիթունեան Մանուկ վարդապետին, որ այն ժամանակ Գրիգորիովութիւնը յաջորդ էր, և Պետրոսուրու յապրիլի 11 զրեալդ առ մեղ հանդերձ և օրինակօք զրեցելոց առ պատրիարքն և առ Մահատեսի Ստեփանոս աղնիւ և ամիրայն և առ ի նմանէ զրեցելոյն առ յարգելի եղբայրը, ընկալաք ի քանի սն հոկտեմբենի և յոյժ ուրախ եմք ընդ ցանկալի առողջութեանդ...: Վասն ոչ յաճախակի զրելոյս առ ձեղ և առ որս արժանն է և մանաւանդ զպատասխանիս քանից զրութեանց անձապիլը հարազատին մերոյ տիրացու Սահակին Թօմայեան, իրաւի մեղադրանաց եմք արժանաւոր, սակայն համարիմ թէ բազմից զառ ի սիրելութիւնէ ձեր զներդութիւն և եմք մաղթեալ պատճառացն յայտարարութեամբ. մանաւանդ զի զու

նակի համար շատ զգալի էր, որովհետև Ճանապարհների վատութեան պատճառով Թիֆլիսից պաշար չէր ստացվում: Այդ նեղ դրութեան մէջ յանկարծ Ցիցիանովի ձեռքը ընկաւ մի նամակ որ գրած էր Գաւիթը կաթողիկոսին իւր կուսակից վարդապետներից մէկը, այդ գրութիւնից երեսումէր, որ Էջմիածնի մէջ Հացի մեծ քանակութիւն էր թաքրած: Ցիցիանովը օգոստոսի 11ին մի փոքրիկ գունդ ուղարկեց վանքը, որ պահած Հացը առնէ բերէ: «Վարդան եպիսկոպոսին յայսնեցէք, ասած է Ցիցիանովի հրամանագրի մէջ, որ «Ես հրամայեցի բանդարկել իրան և ոչ հաց ոչ ջուր տալ նուրան, մինչև որ չի ցոյց տալ պահած Հացի տեղը»: Այդ Հացը գտնուեցաւ և 35 սայլով բերուեցաւ բանակը. վանքական ցորենի

«Ինքնդի խակ քաջ գիտակ ես, որ չեմ ես առողջ անձն, և կարող ոք տու և կացող աշխատանաց, և այսու ամենայնիւ այս քանի ամ պարաւանթեալ և ընդ սպասահարկութեամբ, որ ի վերէ քան զչափ ակար կարողութեան և իմոյ, յայտ է ուրեմն թէ չես ներեալ ինձ անտես արարեալ զինդրանօքս: և Խակ յաղագս պատասխանազրութեանց տիրացու Սահակին եղբօր մերոյ և պարտաւոր երեկիմ, բայց և այն յուղիդ մտաց և մինչ ակն ունէի թէ և թերես ողորմութեամբն Աստուծոյ և նորհօք նորին կայսերական մեծութեան լի արդինաւորութեամբ մատուցանէի նորին սիրելութեան զդար: և ձուած բանիցս, ապա զի ոչ յաջողեցաւ, տեղի ունի ուրեմն մեղադրութիւնն, եթէ իցէ ի կարծիս յաղագս սիրոյ մեր, որ առ նա և կամ վարդէ իցէ թերես զմեղ ժխտուս երախտեաց հարազատից զի արդ և իցէ արդ գարութիւն եղբարց իմոց և ես յանձն առնում զյանցանս առ ամենայն: և Աղէտ տարաբախտ իիպուածոցս, զի այն ինչ բացեալ տարածեցաւ և համաշամ ախորժակ հանդերձանաք սեղանոյն, անդէն իսկոյն լուծին զեւ և բախանն անարժանութիւնք մեր ցանկացեալ բարեացն վայելչութեան: և Քանդի ի մտիցն յուլիսի մինչ ցերեկն սեպտեմբերի անհնարին ոաստ և կութեամբ պաշարեալ զամրոցն Երևանու և ահազին զօրութեամբ սասաւ և նեցուցեալ մինչ իսպառ զմնթիւ բազմութիւն զօրացն պարսից, զորոց և ասէին աւելի քան զՅ հազար, վաղճանաբար նեղեալ ի պակասութենէ և հացի՝ զարձան ունայն և անօրէնն Դաւիթ (Դաւիթ) վաճառեաց մեծաւ գին զտէրն մեր (Դանիէլ) Բապա-խան շահին պարսից կորուսանել մինչ և իսպառ, այլ զոհութեամբ Ամենակարողին, որ ունի ի ձեռին զսիրս առ մենից, ըստ որոյ ձմեւալ և բարբարոս իշխանիւն, դարձոյց առ տէր ըզ զթութիւն նորա, ուր և տարեալ մինչ ի Թարվէդ, Թողացոյց զնա անդէն, ուր ահաւասիկ կայ ի տան հայկաղն իշխանի տեղույն Մահտեսի և Բօհաննէս կոչեցելոյ ընդ իշխանութեամբ բարեբարոյ Ահմէտ-խանին Թարդ և միզոյ բաւական ապահովութեամբ, որպէս և ինքն զրեալ էր սուրբը մա-

քանակութիւնը 150 տուսական չեթվերտի էր հասնում: Սակայն այդ ևս երկար ժամանակ չեր կարող բաւականութիւն տալ գործին, վասնորոյ սեպտեմբերի 4ին լուսադէմին ռուսները թողին Երևանի պաշարումը և գնացին Եջմիածին, որպէս զի հետը առնեն Գանիէլի կուսակից հայ միաբանութիւնը և վանքական կայքը, այն մաքով, որ վերջինը Դաւթի կամ Երևանի խանի ձեռքը չընկնի: Սեպտեմբերի հինգին գորքը հասաւ Եջմիածին, և Ցիցիանովը իւր մեծամեծներով իջաւ վանքում, իսկ զօրքը տեղաւորուեցաւ պարսպից դուրս: Ճեներալ Տուչկովը, որ Ցիցիանովի գլխաւոր օգնականներից մեկն էր, իւր յիշտակարանի մէջ գրում է⁽¹⁸⁾ ։ Ես մոռայ գլխաւոր եկեղեցին (Եջմիածնի) և գտայ այնտեղ իշխան Ցիցիանովի ուղարկած մարդ-

« տամբ իւրով առ միաբանութիւնն մեր, զորոյ օրինակն ընդ գրոյս մա- և տուցաք սրբազն հօր մերում, և առ ի քէն զներելն մաղթել յուսով և յուսացայ:

« Խնդրեմ ափացու Սահակ եղբօրն մերոյ վերատին յարդի սիրեցեալդ և ծանուցեմ ի գերելդ, զի այն աւանդն, զոր եղեալէ ի բեռին Գէորգ վար- և դապիտի, տակաւին բեռինքն այնորիկ արգելեալ պահէ Պայտազիտ բդե- աշխն տեղւոյն, և մինչ ոչ առցէ զոր խոստացեալն են ոչ տայ, բայց և Աստուած եթէ զիարդ ունիցի տնօրինել, այն ևս արդէն անյայտ միայն և ուրեմն անհոգ լիցի, զի բեռինքն ամբողջ ժամանեալ են ի Պայտազիտ, և աեր նոցա կայ հեծենանօք որպէս գառն առաջի գայոց.....

« Ունիմ աւարեալ ի սրբոյ Աթոռոյն զբաղում առանձնագրութիւնս և առ Դաւիչն (Դաւթին) ի Գրիգոր սեակրէ զառաւել Թունալին ընդուկմ նորին կայսերական մեծութեան, Եփրեմ սրբազնին, աղայ Յոհաննիսին և աղայ Մինասին և աղայ Յովակիմին և այլոց՝ ևս և զառաջին սկզբունս զօրութեանց նորա: Յաղայեկովէ և ի Միասարէ (?), որք զզրամ դրամ կոչէն և պատուիրեն անպատիւ առնել զրբազան տէր (Դանիէլ) մեր և գերծուվ զիօրուսն պատրիարքին, ի Ստեփան Վ. Պ ա ց ւ ո յ, որ զ¹⁰⁰

« Քսակ ինդրէ յստ աղազակաւ՝ թէ բացի դրամոց այլ ինչ ոչ օգնէ, ի կոյր և Ղազարէ և կարմեցի Ռևտոսէ, որք զրին թէ 86 հազար զուրուշ ծախեալ և եմք և զես չեմք հոգացեալ ինչ: և կարապիտ վարդապետէ և ի Քօլեան Արքահամէ, որք պղբամ պարտ առեալ տան կաշառո աստ ի Թիֆլիս և ինպրեն յշել զբանա բագրում, տվելս և հակառակս ինքիսնց ինա գրի- և լուփ: ի Սոլոմոնէ Արդութեանց և յումանց Աժտարիսանցւոց ևս և զզազրա- և լիս ի Յօհաննէս պատրիարքէն, զտումար կաշառացն Եղմիքու Մարտիրո- ւէն, ևս և ի բազմաց, զորս զամենեսին ահա ի ձեռու զրագրի տամբ օրի- և նակել զի յանացուք առ սրբազն հայրն մեր (Եփրեմ ?): Նուաստ աբե- րիզայ Ներսէս:

⁽¹⁸⁾ Զակառայե օտъ 1803—1806 года. Н. Дубровина. СПБ. 1866.

« Կանց: Նոքա ժողովում էին գանձը, որ դեռ միջոց չէին ունեցած և տանելու երկու կաթողիկոսները Դանիէլը և Դաւթիթը: Տաճարի մէջ և աեղը դիզուած էին զանազան ոսկեղէն և արծաթեղէն սպասներ, և մարգարիտներ և թանկազին քարեր: Շուտով ներս մոտաւ եկեղեց և ցին և ինքն Ցիցիանովը և Հրամայեց ինձ կարգադրել, որպէս զի և մեղ հետ միասին Թիֆլիսից եկած Ցովհաննէս արքեպիսկոպոսի և (Գեղարդակիր) հետ կնքենք և արկղների մէջ դարսենք ժողոված գանձը և ապա իմ գնդի պաշտպանութեամբ տանենք Թիֆլիսա: և Փանի մի օֆիցերներ, արհեստարուներ և մշակներ իմ գուն- և գից առնուած, շուտով եկան ինձ տուած յանձնարարութիւնը և կատարելու, և ամբողջ օրը և գիշերուայ մի մասը մենք այս գործի վրայ անցկացրինք: Հաւաքելով վանքի բողոք սպասները, ես և նշարեցի անկիւնում Փրկչի պատկերի առաջ մի մեծ ոսկեայ և կանթեղ թանկազին քարերով զարդարած, և երբ որ ես ուզե- և ցայ Հրամայել վեր առնել և այդ կանթեղը, արքեպիսկոպոսը և (Գեղարդակիրը) սկսեց ինդրել որ այդ կանթեղին ձեռը չտանք, և որովհետեւ, ասաց, եթէ մեր գնալուց յետոյ պարսիկները վանքը մանեն և այդ կանթեղը իւր տեղը չգտնեն, այն ժամանակ նրանք և կը քանդեն թէ վանքը և թէ եկեղեցին: Պատկերի աակը եղած « մարմարիոնի քարը վերցնելով, Ցովհաննէսը ցոյց տուաւ ինձ մի և արծաթեայ տուփի, որի մէջ պահուած էր պարսից Նաղիր-Շահի և Հրովարտակը, սորա հետ միասին ուղարկելով կանթեղը, շահը և Հրամայել է որ դա միշտ վառած լինի պատկերի առաջ, իսկ դորա և ծախսը հոգալու համար նոյն Հրովարտակի զօրութեամբ Շահը և պարգելէ վանքին ի յաւիտենական ժառանգութիւն տասնեւերկու և հայ գիւղեր:

« Այս ընծայաբերութիւնը Նաղիր-Շահի ծանր հիւանդու- և թիւնից յետոյ էր: Իւր հիւանդութեան մէջ տանջուելու ժամա- և նակ, թեւումէ նորան մի ձայն, թէ իւր առողջութիւնը վերա- և դարձնելու համար նա գնայ Եջմիածնի վանքը և այնտեղ Փրկչի և պատկերի առաջ, որ եկեղեցւոյ ձախ անկիւնում է, աղօթք և անէ Աստուծուն: Մի կաթողիկ միսսիոնար, որ բժշկումէր Շահին, և խորհուրդ է տալիս նորան անպատճառ կատարել այդ: Նաղիր- և Շահը, որ երբէք վանքում չէ եղած, եկեղեցին ներս մտնելով, և իսկոյն ճանաչեց իւր երազում տեսած պատկերը, աղօթք արաւ, և առողջութիւն ստացաւ և ընծայեց լիշեալ կանթեղը:

« Մինչև լուսանալը վերջացնելով ինձ տուած յանձնաբարութիւնը և բերելով բանակս տասնեւմեկ հակը վանական գանձի, « խնդրեցի Յովհաննէս արքեպիսկոպոսին, որ մեզ հետ միասին թիֆլիս էր վերադառնում, որպէս զի իմ գունդիս մէջ լինի և տէւ և բութիւն անէ այս ապրանաց ¹⁹⁾»:

¹⁹⁾ Տամնե մէկ հակ վանական գանձը բերուեցաւ թիֆլիս, Քանի մի ժամանակից յետոյ, այսէ 1805 թուի յունիսի 17ին Ցիցիանովը գրեց թագաւոր կայսեր, թէ որովհետեւ Դաւիթը մտաղիր էր Էջմիածնի բոլոր թանկազին իրեղէնները յափշտակել և տանել Բայազէթ, վասնորոյ միաբանութիւնը ինդրեց որ այդ իրեղէնները ազատելու համար Վշաստան տանուին, այդ պատճառաւ վանքի թանկազին անօթները, մասունքները, պատկէնները և զգեստը ուստական զօրքը առաւ հետք: Այսուհետև ժէներալ Նեսվետայէվը նորից յանկարծուստ յարձակուելով Էջմիածնի վրայ, վանքում սիրիդի (Ճիլօր) և կեղտու շորերի մէջ գիտութեամբ փաթաթած գտաւ Ա. Գեղարդը և զանազան մասունքներ, որ նմանապէս բերեց թիֆլիս, ուր ժողովուրդը մնծ հանդիսով դիմաւորեց Ա. Գեղարդը ընդունելու բայց որովհետեւ այդ իրեղէնները վեր առնելիս տեղուտեղը ոչինչ ցուցակ չեր շնուրած, այդ պատճառով թիֆլիսում ժեներալ Պօրտնեազինը և հայ հոգեորականք քանի մի օր պարապած էին ցուցակ շինելով: Այդ հետաքրիր ցուցակների մի մասը տպած է ԱԵԿԱ Կայ. Արքօգր. Կօմ. հատոր II եր. 277—278. Աւանդութիւն կայ, որ շատ բան Էջմիածնից մինչև թիֆլիս բերելիս կորած է, մանաւանդ պակասած են ակնեղենները, Նեսվետայէվի յարձակուելուց առաջ, Դաւիթը իւր մօտ գտնուած գանձերը և զգեստը ուղարկած էր Էջմիածնին ի պահուստ և այժմ այդ բոլորը նմանապէս բերուած էր թիֆլիս: Այդ պատճառաւ 1805 թ. սեպտեմբերի 13ին Դաւիթը թագաւոր կայսեր մի խնդիր է գրում, որի մէջ գանգատուելով թէ իւր Ներևան գտնուած ժամանակ Նեսվետայէվը Էջմիածնից տարել է և իւր բոլոր զգեստները և մինչեւ անգամ հանդերձները, խնդրում է հրամայել վերադարձնել, վասն զի վանքը մնացել է առանց զարդի և զգեստի: Այդ խնդիրը մեաց անկատար մինչեւ Դանիէլի վերջնական հաստատուիլը կաթողիկոսութեան աստիճանուր: Իր Դանիէլը Պարսկաստանից վերադարձաւ Էջմիածնին, Գեղարդակրի խնդրանոք գանձի մի մասը ուսւաց տէրութիւնը վերադրեց վանքին: Այսուհետև Սփրեմը, ընտրուելով հայրապետ, Թիֆլիսից անցնելու ժամանակ շատ խնդրեց որ իրան տան հետը տանելու վանքապատկան թանկազին իրեղէնները, բայց ստացաւ միայն մի մասը. իսկ Ա. Գեղարդը և քանի մի ուրիշ մասունքներ մնացին Թիֆլիսում մինչև 1815 թիւը, երբ քաղաքիս առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսը, պատճառ բռնելով Ներևանի կողմը ժամանակախտի երևալը, կարողացաւ Ա. Գեղարդը և մնացած իրեղէնները վերադրձնել Էջմիածնին:

Անպտեմբերի 7ին, առաւօտը, ոռուսաց զօրքը Էջմիածնից յետ դարձաւ դէպի Թիֆլիս, հետը առնելով միաբանութեան այն անդամներին, որոնք խկապէս Դանիէլեան կուսակից էին, կամ թէ առիւպուած էին այնպէս ձեւանալու: Միով բանիւ. 1804 և 1805 թուաւ կաններին Թիֆլիսում գտնվում էին ինը արքեպիսկոպոս և եպիսկոպոս և 26 վարդապետ, որոնցից մի քանիսը յետոյ փախան, վերադարձան Էջմիածնին:

1805 թուի մայիս ամսին ժեներալ Նեսվետայէվը մի փոքրիկ բանակով դիմեց Շորագալի և Նրեանի կողմերը ասպատակ առնելու: Գեղարդակրիը, ինչպէս երեւումէ, նորա հետ էր, իսկ Ներսէսը մնացել էր Թիֆլիսում: Ոուսները շտապով հասան Էջմիածնին, մտան վանքը և աւար առին Դաւիթի կայքը և Էջմիածնի մնացած գանձը ու նորից վերադարձան Թիֆլիս: Ներսէսը ուրախ էր որ կարողացել էր ձեռք բերել Դաւիթի իրեղէնները, բայց անբաւական մնաց, որ վանքական գանձը զօրականների ձեռքին մնացելէ անհաշիւ մինչև Թիֆլիս հասնիը: Ներքեւ բերած մի թերատ գրութիւնից երեւումէ այդ անբաւականնութիւնը: ²⁰⁾ Այդ գրութիւնը Ներսիսի գրչի պտուղ է ըստ

²⁰⁾ Մեր ձեռքին կայ մի պատճած նամակ Ներսէսի ձեռքով գրած, Ահա դորա բովանդակութիւննը՝ Հարազատ Սուրբ Էջմիածնի և վերիլ վեհազնեաց և իշխան հայոց աղայ Մինաս, Ողորմած տէր իմ և բարերար աղզի Հայոց: « Զոր յիւրում ժամանակին անտի ի ճանապարհէն ի գալն մեր սգազգեաց և թաղծութեամբ յուսով բարութեան յայտնեցաք սրբազն Արհի հարց մեռց զի թերիս կարողացին նոքա օդնական լինիլ անյուսալի դիպուաւ և ծոց սրբոյ Աթոռոյն մերում Էջմիածնի, որում ջանք և աղաղակ Ներկայ և գտանիցեալ եպիսկոպոսաց և վարդապետաց ոյխնչ կարացին օդնել, և այժմ ահաւասիկ նոյն սրբոյ Աթոռոյն և մերում միաբանութեան վեհազնեայ հարազատիդ ևս գրեալ օրինակն նորին արժան համարեցաք, և զի և դուք լաւապէս տեղեկացեալ որպէսութեան անցիցն անցելոց որպէս և և արժանն իցէ, փոյթ ունիջիք հոգ տանիլ, վասն զի թեպէտ և անպատճեցան սրբութիւնք մեր և զարդը սրբութեան տաճարին Աստուծոյ և և պարծանք քրիստոնէութեան ինախատինս եղել մեղ ի մէջ բազմութեան և հեթանոսաց, գոնէ մի ըստ ամսնայնի անայցելու զմեղ ծանիցին նորին: և Գոյք և կայք սրբոյ Աթոռոյն մերում ի յափշտակութիւն մատնեալ կուռ և ըիցեն մինչ իսպատ:

« Արդ ի վերջին աւուրսն ապրիլի (1805) լուր եղեւ թէ զօրք Պարսից և գան յիւրան: Մահմէտ խանն հանեալ է զպարսիկ վերակացուս ժողովել և զբաղում զիւղօրայս Հայոց ի սուրբ Էջմիածնին և ամրացուցեալ անդ առ:

երևյթին, վասն զի բաւական չէ որ նորա ձեռքով է գրած, այլ և նորա շարադրած է, որովհետեւ ամբողջ բառեր և նախադասութիւններ կան գրած, որ հեղինակը գրելու ժամանակ չէ հաւանած ու չնջած է, ինչպէս որ սովորաբար լինումէ շարադրելիս: Նամակը այն բաներն է պատմում, որ եղած է Էջմիածնում, Ներսիսի Թիֆլիս եղած

« զգուշանալոյ ի պարսիցն ասպատակութենէ, պահէր ի բազում աւուրս, կարգեալ նոցա կառաւարիչ անդէն զպարսիկ մի իրահիմ անուն, Մինչ- գեռ այնպէս միայն յերկիւցէ պարսիցն սանանեալ էաք (?) ի տարա- կուսի, յանկարծակի եհաս համբաւ թէ զօրքն ուուստաց հասեալ են ի կէ- չիլու, որէ զիւղ մի մերձ յէջմիածին և երեք ժամու ճանապարհաւ, եկն զկնի և զիր ի հայոց կէջլլուայ և յեներալ Նեսվետայովէն, որով ստու- գեցաւ, Յայնժամ իրահիմ վերակացուն ի տագնապի.... փախչել յԵրևան յերեսաց զօրաց Ռուստաց և ոչ յօժարեցան թողու երանել..... աղդ ա- րարեալ նորա Մահմէդ խանին..... փութացին և վարեցին զժողո- վուրդն..... ի ամրոցն Երևանու, Բայց ընդդէմ այսորիկ կարծեաց ժա- մանեալ համբաւոյն յականչս Մահմէդ խանին՝ ի նմին ժամու եկին հա- սին անդի եօթն ևս այլը պարսիկը ի պաշտօնէից խանին, ունելով զզիր սաստիկ հրամանաց վարել վաղվաղակի զմիաբանս սրբոյ Լջմիածնի և զժողովուրդն Հայոց հանդերձ ամենայն աղիւք և անասնօք իւրեանց և ածել յԵրևան: Յուսով բարեկաշտ զօրուն ուուստաց ի բաց մոռացեալ զահ և զերկիւղ մահազունչ պարսիկ իշխանաւորաց իւրեանց, հոգմորա- կանք և մարմնաւորականք ոչ յօժարեցան ընկանու զհրամանսն և միա- բան բազմութեամբ ընդդէմ եղեալ ոչ բացին զդրուս, այլ և ըմբռնեալ զհրացանս յերես նոցա զարձուցին անարդանօք: Արտաքսեալ զիրա- հիմն ի միջոյ իւրեանց, ապա խորհուրդ առեալ զրեցին աղերս առ զե- բազանց եներալ Նեսվետայովն երադ ժամանեցուցանել զօդնականութիւն իւրեանց, մինչդեռ չիցէ հորացեալ ի վերայ իւրեանց բոնութիւնն պար- սից: Եթէ ինքնիմն կամաց և եթէ յորդորեալ յաղերսանաց բազմութեան, ի և մասսի յառաւօտոց ընդ լուսածադն երևեցան ի հանդիպոյ բարձր փառաւորագոյն զօրքն ուուստաց, հնչեցուցին զզանգակս և դասք հոգես- բականացն՝ արքեպիսկոպոսունք, վարդապետք, արեղայք, քահանայք, սարկաւագք և դպիրք՝ իւրաքանչիւր զգեստուք և ամենայն եկեղեցական զարդիւք, խաչիւք, խաչվասօք և մատուցեալ յարգութեան նոցին զպատիւս, մեծաւ հանդիսիւ, երգօք հոգենորականօք ուղղեցին ըդ- շաւիլս ածել ի ներքս ի սուրբ Էջմիածին, բայց քանզի եներալ Նեսվե- տայով զգացեալ էր, թէ լի է ամենայն պարիսան ժողովրդեամբք հայոց հրաման ետ վասն զօրաց արտաքոյ զբանակ հարկանել....:

« (Թ երթի միւս երեսին)... խառն ի խուռն հանսեալ էր առանց զբեկոյ և առանց օրինաւոր հոգացութեան, սոքա ամենեքին ընդ լաւ և ընդ

ժամանակը, ուրեմն այս տեղ ուեք դերանունը գործ է ածած Ներ- սէսը ուրիշի կողմից: Արդեօք Գեղարդակրի թէ մի այլ հոգեորականի բերանից է գրած այդ նամակը, մեզ յայտնի չէ: Առհասարակ, ինչպէս արդէն ասած ենք, Ներսէսը այս միջոցներում շատ է պա- րապել նամակագրութիւնով և մեծ մասը գրած է այլոց բերանից

« վատմի ըստ միոջէ զրեալք են ի թէֆթէրի իւրաքանչիւրքն բոլոր պարագա- յիւք իւրեանց, և ըմբռնեալ զծայրից Կապերտի միոյ որ անդ կայր, որ- շակի ևս ասացի նորին գերազանցութեան, թէ մինչեւ այս կապերտ ըստ գունւոյն, ըստ չափոյ երկայնութեան և լայնութեան և ըստ հսութեան և նորութեան զրեալ լինի ի թէֆթէրի մանրամասն հանգամանօք, լաւ լի- նի ապա թէ դուք բարւոք խնամատարութամբ ժողովեալ զայսուիկ հա- մաձայն խոստման ձերոյ զրով և թէֆթէրով արասջիք զինչ և առնելոց իցէք, որում ևս պատասխանեաց յայնմ ժամանակի թէ այժմչ բարւոք ժամանակ, յետոյ ի գնալն ի ճանապարհին ուր և բանակիցեւք անդանօր հայեացեալ զթէֆթէր զրեացուք: Զայս այսպէս պատասխանեալ (Նեսվե- տայէվ) ապա եհարց՝ թէ ի սենեակս ձմերանոցի ևս գտանիցին ինչք, և մեք բանզի ոչինչ զիտէաք հաւաստի ոչ կարացաք պատասխանել որո- շակի ինչ, բայց այսու ամենայնիւ ինքն ենարալն և որք ընդ նմա ի- շեալ ի ձմերանոց անդր, քանզի քակեալ կային զրունքն, խորտակեցին զդրուսն և մտեալ ի ներքս հանին և անտի զքանի ընոփնու, յորում ժամանակի և ևս տեսեալ զթէմպէլլիթ մի զի ծածկեալ ի ներքոյ թղթոց և և այլ և այլ մանր իրաց մնացեալ էր անդէն՝ առի զայն և տեսի զի միւս և ընկեր նորա էր և ընդ նմա, զայն մի թէմպէլլիթն ես առեալ հանի արտաքս և վասն միւսոյն յայտնեցի Յօհաննէս և Սարտիրոս վար- պապետացն, զոր ևս Յօհաննէս վարդապետն զնացեալ երեր անդր, իւրեանց իւրեալ իւրի ի միւս զմինն ի նոցանէ, մեք.... տեսաք զրեալ էր ի վերայ միոյն թէ ևեկեղեցական էն, պատշաճ համա- րեալ զայն մեք առաք և միւսն՝ յորոյ վերայ ոչինչ կայր զրեալ, ետուք նմա, զոր առեալ տարաւ ի տեղի իւր և բերէ մինչեւ ի Բամբակաձոր և զոր տեսանէր հանապազ ամենայն բազմութիւն որ ընդ մեզ. Եւ վասն զի խոստացաւ զերազանց եներալն, որպէս գրեցաւ, թէ ի ճանապարհին ունիցի զթէֆթէր առնել, առայն ուրեմն և մեք ևս յամենայն իջևանի ակնաղէտ լինչաք, թերես արասցէ սոպէս խոստացան, այլ տեսաք զի յամենայն իջևանի լինքն միայն ընդ իւրոցն բացեալ առնէր զրինչ և առնէր և մեզ ամենեքին ոչ երբէք մերձեցոյց մինչեւ ցվաղճան, իսկ իրեւ ժամանեցաք ի Ղարաբիլսայ, յետ երկուց և երից աւուրցն կոչեցին զինք ի տուն ենարակն, ուր կայր ժողովեալ բազմութիւնք ուուստաց: և բա-

Նոցա յանձնարարութեամբ²¹⁾: Միմիայն ամենահրաժեշտ զեպքերում ինքը ևս ստորագրում է ամենից վերջը և ուռաստ Ներսէս արեղայ:

« ցեալ տարածեալ ի հրապարակի անդ զամենայն սուրբ մասունս, ընդ որս էր և Յովիաննէս վարդապետն կարեցի (ոչ Դեղարդակիրն), չև ևս անցեալ ի վերայ ճ րօպէ, եղ արտաքս Յովհաննէս վարդապետն, յետ նորա ոտն կացի և ես զի ելից, և ստիպեցին զիս նստիլ և հայիլ յայն զորս կամէին գրել. այլ ոչ յօժարեալ ելի և ես արտաքս: Եւ յետ աւուրց ճանապարհորդեալ եկաք ի Թիֆլիս քաղաք: Եւ մինչ եկաք ի մեր բնակարան, եկն անդ Նահապետ Արշակեանն և նա պատմեաց զարմանալով թէ այս որչափ կայք են եղեալ սուրբ Աթոռոյն, մինչ թող դընտիր ընտիր ինչուն՝ 15 հազար թումանի (պարսից) միայն ոսկի և արծաթ լինի մինչն ցայժմ ելեալն և այն երեք ծրարքն որք գրեալք էլին ի փոքր փուսոււլային (ցուցակ), մինն որ յառաջ ելեալ էր, մինն ևս եղ, այժմ և միւսն գտանի ի հարկէ, զոր լուան և կարբեցի Յովհաննէս վարդապետն և Ստէփան վարդապետն, զրադիր Յակոբ և Մկրտիչ արեղայքն և Խաչառուր սարկաւագն....»

« (Այս երեսի կողքին զրած է) ...ութիւն վանիցն, մեք ևս ասաց ցաք թէ մեծն և ծերունին է Յովակիմ եպիսկոպոսն, ժամօրհնող և կառավարիչ Մարտիրոս վարդապետն....»

Կեսեր դրած տեղերը նամակի մէջ պատռած են և չեն կարդացում:
